ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ— ԹԻՒ 3785 1885 ՕԳՈՍՏՈՍ 31

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ	Հայ ընթերցանութիւնն առանց այբուբէնական կարգի (Օրինակելի դաս մը)	Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ
ՎԷՊ	Գնանք ընթրել (Տփղիսի կեանքից)	Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ	Կրանտ զօրապետին թաղումը	ԵԱՆԲԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Տաղ Պլպուլին եւ Վարդին, ի խաչատուրէ ասացեալ.....Հաւաքեց	Հ. ԷԿԻՆԵԱՆ
ՔԱՂՈՒԹ ՇԱԲ. ԼՐՈՑ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կզավիէ տը Մոնթէքէն) թարգմ.	Մ. ՁՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս	տարեկան	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ	Քառ. » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք	»	15 դահ. արծաթ
Մէկ թերթին գինն է		60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Ղալաթիա, Նոր-Ստամբուլ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱ

Վիճակ յ 31 Յուլիս 1885

ՊԱՀԱՆՋՔ

	Ղուրուշ	
Բաժինք չդանձուած	550,000,000	
Մնացուկ ի Կ. Պոլիս	61,256,170	39
» ի մասնաճիւղս	35,220,404	23
Գանձելի փոխանակագիրք	473,968,268	11
Ընթացիկ հաշիւք Կայսերական գանձուն— «պարտականք»	665,224,212	30
Ընթացիկ հաշիւք զանազանք — «պարտականք»	302,101,151	33
Փոխատուութիւնք արժէթղթոց և վաճառաց վրայ	104,032,900	31
Անշարժ և շարժական գոյք	8,843,581	21
Զանազանք	2,658,295	27
	2,205,304,284	6

ՊԱՐՏՔ

	Ղուրուշ	
Դրամագլուխ	1,100,000,000	
Պանքնոտաց ի շրջաբերութեան ի Կ. Պոլիս և ի մասնաճիւղս	44,737,000	
Վճարելի փոխանակագիրք	115,082,555	24
Ընթացիկ հաշիւք Կայսերական գանձուն—«պահանջողք»	1,692,759	
Ընթացիկ հաշիւք զանազանք— «պահանջողք»	489,935,995	12
Դրամական աւանդք որոշ պայմանաժամով	80,231,788	20
Պահեստք զանազանք	314,290,335	
Վճարելի շահաբաժինք	13 089 307	
Զանազանք	44,244,543	30
	2,203,304,284	6

Վաւերացեալ ճշդութիւնն ըստ տումարաց

Տնօրէն
Է. ՏՐՎՕ

Տնօրէն
Մ. ՖՈՍԹԷՌ

ԳՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐԱՍ

Ղալաթիա, 30 Օգոստոս

ԸՆԹԱՑԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքային	109 5/8
3 » » » (վճռելիկն)	109 1/4
3 » Բարիզի » (պանքային)	23
3 » » » (վճռելիկն)	23 07 1/2

ԸՆԹԱՑԻ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Սամանեան Քօնսոլիտէ

		Գահեկան
Երէկ երեկոյ գոց. (Միաց. D. Սէրի Գ. Կ.		— —
Պօրսային գոցուելէն վերջը	»	— —
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	18 03
Բարձրագոյն գին	»	18 03 1/2
Նուազագոյն »	»	17 03
Կէս օրին	»	18 03 1/2
Փոխառութիւն 1858)		
» 1862)	A. Սէրի Դ. Կ.	33 10
» 1860)		
» 1863)	B. » » Կ. » »	18 20
» 1872)		
» 1865)		
» 1869)	C. » » Կ.	18 2
» 1873)		

ԻՆՆԻՓԻԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երէկ իրիկուն գոցուեցաւ	—	—
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.	73	10
Կէս օրին	73	10

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Օսիէթէ ժէնէրալ Գ. Կ. Անգլ. Լ.	3	25
Քրէտի ժէնէրալ » » Օսմ. »	6	32
Պանք տը Գոնս » » » »	4	30
Սօս. Շանժ է վալէօր » » » »	3	30
Թրամուէյ » » » »	295	
Բուսմելիի երկաթուղի Ֆր.	42	125
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ »	—	
Բաժնեթուղթ Լաւրիօմի »	57	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի ղրշ.	100	
Օ Ֆրանքնոց »	87	32
Անգլիական ոսկի »	110	20
Բոլ իմբերիալ »	90	20
Քրիմից »	51	20
Ռուսական թղթադրամ »	9	08
» արծաթ »	89	30
Ֆիորին »	8	38
Մէճ. արծ. (տարբ.) »	108	
Վեցնոց »	102	25
Հինգնոց »	102	20
Թէթալիք »	98	
Պղինձ »	—	
Թղթադրամ »	—	

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34ՐԴ ՏԱՐԻ — 1885 ՕԳՈՍՏՈՍ 31 — ԹԻՒ 3785

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 31 ՕԳՈՍՏՈՍ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ

(ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ ՄԸ)

Մի քանի անգամներ առիթ եմ ունեցած խօսիլ իմ պաշտօնակից Պ. Ուսուցիչներին հայ ընթերցանութեան նորագոյն եղանակի մասին, որի իմաստասիրութեան եւ կիրառութեան համար վերջերս մեծ ճիգ թափեցին Ռուսահայոց ամենահմուտ մանկավարժներն։ Այսօր օրինակելի դասով մը կը բացատրեմ այդ դրութիւնը։

Հայ ընթերցանութիւն-ն առանց այբուբենական նոթքի սոսոցանելոյն օրինակելի դասն իւր տարրական մասերով երեք հիմքերի վրայ իրագործուելով կարգով կը նշանակենք հոս զանոնք։

Նկատողական սոսում

Աչքի առաջ ունենալ առարկայն, մօտ երթալ, շօշափել, կամ երեւակայել (առարկայի բացակայութեան պատճառով), յիշել, իւր բոլոր երեւոյթներովն մտքին մէջ կերպարանել առարկայի ուրուական-մտապատկերն, ընդհանուր գաղափար կազմել նորա արտաքին յատկութիւններին եւ կազմական մասերի վրայ՝ վերլուծելով զանոնք եւ զրոյցներ անելով։

ԿԱԹ (*)

(Ա. Դաս)

Գաբէթին, Վահան (անուանել հետզհետէ ամենի անուններն ալ) Գիտէ՞ք թէ ինչու համար համախմբուած էք այս Մանկական Սրահի մէջ, բայց հասկցա՞ք թէ համախմբուած է+ ի՞նչ կը նշանակէ։ — Այո՛, այո՛, ժողովուած։ Հմայեակ։— Ճիշդ ինչպէս վառելիներ կը ժողովին իրենց սիրելի մօր թեւին տակ։ Շատ լաւ, այժմ ասէք տեսնեմ, ինչո՞ւ համար համախմբուած էք այս Մանկական Սրահի մէջ, (պէտք է, որչափ ալ լի՛ն մանուկ-աշակերտներ, վարժեցնել որ այսպիսի դէպքերի մէջ ցուցամատերով ցոյց տան թէ իրենք որ եւ իցէ հարցի մասին պատրաստ են պատասխանել, որոյմէ մէկին միայն պիտի պատասխանէ Ուսուցչի ընտրողութիւնով)։ Սթեֆան։ — Կը յիշեմ որ ամիս մ'առաջ մեր պարզապէս կրուցատրական դասերէն մէկի մէջ ասիք մեզ թէ, համախմբուած ենք կրել-կարդալ եւ ուրիշ բաներ սորվելու համար։ — Շատ լաւ, իսկ դուք ի՞նչ կ'ըսէք, կը վկայէ՞ք ասոր, — Այո՛, այո՛, (միաձայն)։

Ուրեմն, այժմ պիտի խօսիմ ձեզ այնպիսի նիւթի վրայ, որով գրել եւ կարդալ պիտի սորվիք։ Գրիգորիս։ — Ես գիտե՞մ ի՛նչ է այն, Պ. Ուսուցիչ։ Տիգրան։— Ինձ ալ ծանո՞թ է այն։ — Սպասեցէք, սպասեցէք, շատ շուտ պիտի յայտնեմ ձեզ զայն։

Ուսուցիչն՝ որ մանուկ-աշակերտի թարմ եւ ախորժալուր արտայայտութիւններին

(*) Նկատողական ուսման պատճառով տեղի ունեցած համառօտ զրոյցները մէկ մէկ դասեր ընել վերջ։

խիստ ներողամիտ աչքով կը նայի, պէտք է թոյլ տայ որ ամեն մի աշակերտ իւր անյագ հետաքրքրութիւնը ա տաջ անէ։

Այստեղն է որ մանուկ-աշակերտներ իրերի արտաքին երեւոյթների հետ համակրական խիստ մօտաւոր հաղորդակցութիւն կը հաստատեն, եւ իրենց հոգին կը լցնեն հետզհետէ հոծ մտապատկերներով։ Ուստի, պէտք է մի որ եւ իցէ առթի մէջ չվիրաւորել երբէք անոնց հարցասիրական հետաքրքրութիւնը։

Այդ դաս-առարկայն է կոչ։ Ըսէք նայիմ, տեսնո՞ր էք զայն, կամ թէ ի՞նչ գիտէք, յայտնեցէք։ Մէրիէ.— կաթը սպիտակ է ...։ Գիտէ՞ք թէ ի՞նչ կայ անոր պէս սպիտակ։ Գրիգոր.— բամպակ։ Տիրան.— ձիւն։ Սրբէս.— թուղթ, կտաւ, կիր եւ։ Կաթը սպի՞նդ է թէ հեղուկ։ Անդրէաս.— հեղուկն ի՞նչ է, ջուրի՞ պէս, — այո՛, այո՛, — ուրեմն հեղուկ։ Ըսէք տեսնեմ, ի՞նչ կայ հեղուկ կաթի պէս. — քացախ, գինի, ջուր, սուրճ։ — Դու տեսնո՞ր ես քացախ, Գրիգորիս. — Այո՛, այո՛, մեր դրացիի տունն տեսայ անցեալ կիւրակէ։ Շարունակեցէք, ինչ որ գիտէք. —Կաթը կը խմեն տաք կամ պաղ. — Կաթով կերակուր կը չինեն. — Կաթի մէջ աղ չեն ձգեր. — Մայրս կաթով կը կերակրէ փոքրիկ քոյրս. — Կաթը կը ծախեն։ Գիտէ՞ք թէ կաթ տուող կենդանիներն որո՞նք են. — Ձի, էշ, ոչխար, կով, եզն (ընդհ. ծիծաղ), այնպէս չէ՞ մի-թէ, ինչո՞ւ համար նա կաթ չ'տար. — որովհետեւ պտուկներ կամ ծիծ չունի. (քանի որ կաթի կազմական մասեր ծանօթ չեն մանուկ-աշակերտի նորընծայ հոգիին, անօգուտ եւ վնասաբեր է ուրեմն չարչարել այս մասին նորա հոգեկան կարողութիւնը)։

Այսպէս մանկային անխոնջ հետաքրքրութիւնը թէպէտ մեծ ասպարէզ կը բանայ ուսուցիչին առջեւ, պէտք է սակայն հոգ տանիլ որ աշակերտները չը յոգնին դասի երկարութեան պատճառով։ Ուստի պէտք է դոնէ 10 վայրկեան դադար տալ։

Ստոյգ է թէ մանուկ-աշակերտը՝ ըսելու միջնորդութիւնով, տեսնելու տպաւորութիւնով եւ նկատողութեան կենդանի միջոցներով որ եւ իցէ առարկայի մտապատկերն իւր հոգիի մէջ զետեղելէ ետք այլ եւս չը ցուցներ թէ ինքն այդ առարկայի մասին մի որ եւ իցէ որոշ եւ գիտակցական գաղափար կազմած չէ։ Մեզ յայտնի է ուրեմն որ նա հիմնապէս իրեն կը սեպհականէ զայն։

Ընդունելով թէ առարկայները նուազ կամ աւելի թիւով հնչիւնների կուտակումն են, վերլուծութեան օրէնքների համաձայն կը տարրալուծենք զանոնք, այսինքն ձեռք առնելով ամեն մէկ հնչիւնի տարբերութիւնն զգալի անել, անոնց կազմակերպութիւնն իրենց հատակոտոր մասերէն կը բաժնենք։

Առարկայի ամբողջական ձայնի կամ նորա ամեն մէկ հնչիւնի տպաւորութիւնը մանուկ-աշակերտի ըմբռնութեան եւ անկէ ուղեղին վրայ ազդելով անդրադարձաբար առաջ կը մղուի ուղեղի եւ լեզուի ելեկտրոնեան հաղորդակցութեան միջոցաւ արտասանուելու։

Սա՝ հնչական արտասանութեան գլխաւոր աշխատանքն է, զոր կը նշանակենք հոս։

Հնչական արտասանութիւն

(Լսել, ուղեղի վրայ տպաւորել, նոր մը-տապատկեր մը գոյացնել, հաղորդել լեզուին եւ արտասանել)։

ԿԱԹ

Այժմ արտասանեցէք ինձ պէս ձեր դասու առարկայն, բայց խիստ բացորոշ, յստակ և մեղմ կերպով։ Արտասանեցէք տեսնեմ։ Գրիգոր.— կաթ. — Լաւ, լաւ։ Վահան. — կաթ։ Քիչ մը հանդարտ եւ ծանր։ Դաւիթ. — կաթ։ Լաւ, լաւ։ Մտիկ ըրէք այժմ, պիտի արտասանեմ կոչ առարկային ամեն մէկ ձայներն որոշ, որոշ, Ջանացէք դուք ալ ինձ պէս արտասանել, հիմա մտիկ ըրէք, — կ՚ա՛թ՝ (ինքն կը կրկնէ քանիցս)։ Է՛հ, տեսնեմ, ո՞վ կուզէ։ Գրիգորիս.— կա՛թ։ Այդպէս չէ, այլ ինձ պէս, — կ՚ա՛թ՝։ Տեսնեմ ո՞վ կ՚ուզէ։ Վահան.— կ՚ա՛թ՝։ Լաւ, շատ լաւ։ Սրբէս. — կ՚ա՛թ՝։ Լաւ, լաւ, ամենքդ ալ զատ զատ։ Այժմ ես վերստին պիտի արտասանեմ այնչափ ծանր, որոշ եւ երկար, որ դուք կարենաք ջոկ ջոկ ամեն մէկ հնչիւնի տարբերութիւնն իմանալ. մտիկ ըրէք, — կ՚ա՛թ՝. ըսէք այժմ տեսնեմ ամեն մէկ հնչիւնի տարբերութիւնը ջոկ ջոկ։ Դաւիթ.— մէկն է, կ՚ (որի արտասանութեան կը հետեւի լեզուին ը ձայնաւորը, սակայն պէտք չէ յայտնի ընել կամ զգացնել

մանուկ – աշակերտին նորա առանձին հընչիւնը, որպէս զի կ եւ ա տառերն իրարու միացնելու ատեն անոր պատճառով դժուարութեան չը հանդիպի)։ Մի՞սն։ Աբշակ։ — ա՛։ Ամենէն վերջի՞նը։ Սեբբակ։— թ՛։ (կրկնել քանիցս)։ Այժմ կրնա՞ք ըսել թէ քանի՞ ձայն ունի կոչ։ — Այո, այո։ — Վերստին ըսէք առաջին հնչիւնը։ Վահան։— կ՛։ Երկրո՞րդն։ Սաբբէ։— թ՛։ Ոչ, ոչ, սխալէ (միաձայն)։ Հապա ո՞րն է. — Ա՛։ Ի՞նչ։ — Ա՛։ Ի՞նչ։ — Ա՛։ Լաւ։ Երրո՞րդն։ — թ՛։ Ի՞նչ։ — թ՛։ Ի՞նչ։ — թ՛։ Շատ լաւ։ (կրկնել այս փորձ)։ ըսէք տեսնեմ առաջինն։ — կ՛։ Երկրո՞րդն։ — Ա՛։ Երրո՞րդն։ թ՛։ (կրկնել քանիցս)։ Ուրեմն, դիտէ՞ք, եթէ այդ ձայներն միանան ի՞նչ կը կազմեն։ Վահան։ — կա՛թ։ Ջոկ ջոկ ըսէք, եւ միացուցէք։ Սահակ։ — կ՛ ա՛ թ՛= կաթ։ Ո՞վ կ՚ուզէ ըսել, (կրկնել քանիցս)։ հիմա ուրիշ փորձ անենք, առաջին (դիտէ՞ք) եւ երկրորդ հնչիւններն միացընել և արտասանել։ Մկրտիչ։— կ՛, ա՛։ Այդ չ՚եղաւ, պէտք չէ միայն ջոկ ջոկ ըսել, այլ նաեւ միացնել։ Սաթէոն։— կ՛, ա՛։ Չ՚եղաւ դարձեալ։ Գաբրիէլ։ — կ՛, ա՛ = կա՛։ Շատ լաւ, ըսէք այսպէս (կրկնել տալ)։ այժմ առաջինն, երկրորդն, երրորդն ջոկ ջոկ եւ միասին արտասանել։ Թաքուհի։— կ՛, ա՛, թ՛ = կաթ։ (կրկնել տալ)։ Է՛հ, ուրիշ բան անենք, առէք միմիայն առաջին հնչիւնն։ — կ՛։ Կրնա՞ք գտնել այնպիսի առարկայ որի սկիզբն, մէջն, եւ վերջ լինի այս հնչիւնն։ Տէրբան։— կով։ Վահան։— կանաչ։ —Ընկեր։ — Մէկ։ — Հաց։ — Ոչ, ոչ, սխալ է վերջինը։ — Ինչո՞ւ։ — Որովհետեւ կ՛ չը կայ անոր մէջ, (այս փորձ կատարել միւս ձայների վրայ ալ)։ յետոյ առէք կոչի պէս երեք հնչիւն ունեցող առարկաներն։ Սաբբէ։ — հաց, —դաս, — կաւ, — գրիչ, — ոչ, ոչ, սխալէ վերջինը։ Այժմ պէտք է որ դուք այս ձայներէն մէկն հաւնէք եւ սիրէք։ Մաբբաբ։— թ՛։ — ես ալ թ՛։ — ես ալ թ՛։ Վահան։— կ՛։ — ես ալ կ՛։ Ես ա՛ շատ կը սիրեմ։ (այս փորձ խիստ օգտակար է հընչիւններն ըմբռնել տալու համար)։

Մանուկ – աշակերտն, որ ամենատկար բայց դաղափարական նախատիպն է մարդկային սեռին, իւր հոգիի մէջ հետզհետէ ծագումն առնող մտապատկերների քաղցր տպաւորութեան ներքեւ որչափ հրապոյրներ ներշնչէ, այնչափ կը հետամտի, կը հետաքրքրէ, կը հարցասիրէ, եւ կը գրկախառնուի՛ անոնց հետ խիստ բեղուն սիրախառնութիւնով։ Կը հետեւի ուրեմն թէ, նա իւր թարմ բայց զօրաւոր հոգիին մէջ նկատողական եւ հնչական ապրատանութեան աշխատանքների միջնորդութիւնով աւելի կամ նը-ուազ մտապատկերներ համախմբելէ ետք, մեծ փոյթ կը ցուցնէ նոցա արտագրութիւնը տեսնել, այսինքն անոնց մարմնական երեւոյթը անդրադարձաբար ընդունել իւր աչքերի մէջ դիմահար իրերի վրայէն։ Այս դիմահար իրերն են դեռին, պատ, ծառ, քար, տախտակ, կտաւ, գրատախտակ եւ։

Պարզ է թէ որ եւ իցէ մանուկ իւր բընական տրամադրութիւններին համաձայն նախ կը տեսնէ, կը շօշափէ իրեն հանդիպող իրերը, յետոյ նոցա արտաքին երեւոյթը աչքերի հաղորդութիւնով՝ ուղեղին կը-տայ, որմէ մի նոր մտապատկեր կը յօրինէ իւր հոգիի մէջ, յետոյ լեզուի միջնորդութիւնով կ՚արտասանէ, կամ կ՚անուանէ զանոնք, իսկ ամենէ վերջ ձեռք կ՚առնու նոցա նմանը լինել, (էր չ՚եղողների համար չ՚է խօսքս, որոց համար ալ ուրիշ փորձեր կ՚ընէ)։

Ճիշդ ասոր համաձայն մանկավարժութիւնը կամ բնական օրէնքներին բնական ուսումն, առարկայների իւրաքանչիւր հընչիւնի արտագրութիւնը կամ մարմնաւորումը նկատողական ուսման եւ հնչական արտասանութեան փորձերէն վերջ կը պահէ, զոր կը նշանակենք հոս։

Հնչիւններէ մարմնաւորումը կամ գրել,

(Ձեռք շարժել աջէն ձախ, ձախէն աջ, վարէն վեր, վերէն վար ելնել, իջնել, եւ գծել մատի, փայտի, երկաթի, ածուխի, կաւիճի, մատիտի եւ միջնորդութիւններով վերեւ նշանակած դիմահար իրերի վրայ)։

ԿԱԹ

Ինձ նայեցէք, մէկ կարգի վրայ կեցէք, առէք այժմ ձեր դաս—առարկային ամբողջ ձայները միասին (կը յիշէ՞ք), — կաթ։ Փիտէ՞ք ի՞նչ պիտի ընեմ, ինչո՞ւ համար ցուցամատս պատրաստեցի։ խնայեցէք, ձեր դասը պիտի մարմնաւորեմ, այսինքն ձեր տեսութեան ենթարկելու համար զայն՝ նորա ամեն մէն հնչիւնի բնական երեւոյթը ձեր

աչքի առաջ պիտի դնեմ։ Բայց պէտք է սկսեմ նախ առաջին հնչիւնէն, ըսէք տեսնեմ, ո՞րն է այն։ Յակոբ. Կ՛.—Լաւ, հիմայ գրատախտակի (որն որ դիւրամատչելի է ձեզ) վրայ եւ իմ մատին նայեցէք, կը գրեմ Կ՛, (վերէն վար Ա. մասն կամ գիծն, Ի. վերէն վար Բ. մասն կամ գիծն քաշել, յետոյ երկու մասերն կամ գիծերն միացնել նուրբ գիծով մը եւ կազմել։ Հոգ տանելու է որ այդ գիրերի ձեւը մեծ մասամբ տպագրի ձեւին նմանի, որովհետեւ յայտնի է թէ մանուկ-աշակերտն ամենէ առաջ տպագիր գիրերին կը հանդիպի քան թէ ձեռագիր իւր ուսանողական երկրին մէջ), Էհ, տեսա՞ք ի՞նչպէս գրեցի, — Այո, այո։ Կրնա՞նք գրել։ Վահան, — ես կը գրեմ... այսպէ՞ս է թէ չէ, — չէ, շատ լաւ չ՚եղաւ, (պէտք է գրել քանիցս, կամ մատով ջրին մէջ թրջելով, եւ կամ կաւիճով. առաջինը աւելի դիւրամատչելի է)։ Սորվեցաք այժմ, գրեցէք կարգով։ Սարգիս — կը գրեմ, — լաւ, լաւ։ Ես ալ գրեցի, — շատ լաւ։ Զը մոռնանք ձեւը, պիտի աւրեմ, — ոչ, ոչ, Գիտէ՞ք կ հնչիւնով ի՞նչ առարկայ կայ, — կով, — կալ։ Այդ առարկայներին (կ) հընչիւններն ալ այդպէ՞ս կը գրուին, — Այո, այո, (այս վերջին փորձ խիստ օգտակար է, որովհետեւ (կ) հնչիւնին ամենուրեք միեւնոյն լինելուն դաղափարը կը զարթեցնէ մանուկ աշակերտի հոգիին մէջ, զոր սակայն անդիտակցապէս կը շփոթեն շատ անգամ առանց այս փորձին)։ Տեսէք, հիմայ կը գրեմ երկրորդ հնչիւնը, գիտէ՞ք, ո՞րն է, — ա՛ (վերէն վար Ա. մաս — գիծ, վերէն վար Բ. մաս — գիծ, վերէն վար Գ. մաս գիծ քաշել, յետոյ վարէն, ձախ կողմէն նուրբ գիծով մը միացնել զանոնք եւ կազմել ա՛,) գրեցէք տեսնեմ։ Գաբրիէլ, — Ես կը գրեմ, — ես ալ, — ես ալ, — շատ լաւ (միեւնոյն փորձը անթերի կատարել բոլոր հնչիւնի գրութեան մասին) այժմ կը գրեմ Գ. հնչիւնն թ՛, (վերէն վար Ա. մաս — գիծ, յետոյ Ա. մասի վերի ծայրէն սկսելով ձախէն աջ դէպի վար երկնցնել մինչեւ Ա. մասի — գծի կեդրոնը, յետոյ դէպի ձախ տանելով մասը՝ շրջանակաձեւ դուրս երկնցնել երկրորդ գծին վրայէն), գրեցէք ինձ պէս, — լաւ, լաւ։ Գրեցէք այժմ երեքն ալ մի առ մի. — լաւ։ Այժմ ըսէք տեսնեմ այդ երեք հնչիւններն ի՞նչ կը կազմեն միկտեղ. — կաթ, ուրեմն, այդ տեղ գրուածը ի՞նչ է։ Գաբրիէլ, — Մոռցայ, — խորհեցէք, — Սահակ. — կաթ. — այո, այո, (*) (միաձայն)։

Արդ, հայ ընթերցանութիւնն առանց այբուբենական կարգի ուսուցանելուն օրինակելի դասը իմ պաշտօնակից Պ. ուսուցիչներին յանձնարարելէ ետք, կը յայտնեմ թէ անկէ աւելի բնական միջոց չէ կրցած գտնել մանկավարժութիւնը՝ կորզելով մանուկ աշակերտը մեքենական դասաւանդութեան անխղճահար ճիրաններէն։

Վան Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(ՎԷՊ ՏՓՂԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ)

Է.

ՄԵՐ ՎԷՊԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

Թաղերի այն խմբին, որը սկսած «Գոլովինսկի պրասպէկտ» մեծ փողոցից փըռվու�դէպի վեր —հիւսիս, ամիոփելով իւր մէջ հարիւրաւոր անշուք, ընդմիջաբար շըքեղ տներով նեղ եւ կեղտոտ փողոցներ, կոչումեն «Թացմինդա»։

Տիկին Հռիփսիմէն և Վարդուհին Թատրոնից ելնելով, կրկէսի մօտից դէպի վեր «Կանիշնաեա» փողոցը բարձրացան և թիւ 21 տունը մտան։

Այնտեղ էր նոցա բնակութիւնը. աւելի քարվանսարայի քան թէ տան տեսք ունէր այդ շինութիւնը, որովհետեւ նորա ընդարձակ բակի շրջապատում գտնուող սենեակները բռնուած էին ամէն ազգի ընտանիքներով։

Սիմոն Կարապետովը —Վարդուհւոյ մօրքրոջ ամուսինը բռնուէր բակի վերջին ծայրում գտնուող երկու սենեակները, իսկ Ստեփան Սառաֆովը — տիկին Հռիփսիմէի ամուսինը, բռնել էր այդ սենեակների դէմ

(*) Պէտք է դանել տալ հետզհետէ ամէն մէկ դասաւարկայի գիրերն իրենց ապագայ դասագրքի կամ ուրիշ առձեռն ունեցած գրքերի մէջ։

ու դէմ դնուող պատուանդանների վրայ չինուած երեք բարձր սենեակները։

Սառաֆովը մի երիտասարդ մարդ էր հաճելի դէմքով. նա Թամանիէվի քարվանսարայում, որին երկրորդ բազաղխանայ կարելի է կոչել, ունէր մի փոքրիկ մանրավաճառի խանութ, առաւօտեանները դնում էր եւ երեկոյան ուշ դառնում, թողնելով ամբողջ օրը տիկին Հռիփսիմէին շափշվել Տըփխիսի փողոցները, մնալ ամէն մի խանութ, խօսել, ծիծաղել խանութպանների հետ, մըտնել տուն, թատրոնի տոմսակներ ծախել — առարկելով, որ ինքը մի զաւակի տէր է — այրի, անօթի է, որ օգնեն իրեն, քանի որ ներկայացումը իւր որդւոց օգտին է։ Ս.յսպիսի հազար եւ մէկ գործերի ետեւիցը վազելու տիկին Հռիփսիմէն կատարեալ ազատութիւն ունէր, ուստի Տփխիսում բոլորը համարեա ծանօթ էին նորան։

Սիմոն Կարապետովը չթեղէնի վաճառական էր եւ նորա խանութը գտնվում էր հանրածանօթ «Բազաղխանայի» մէջ։

Բազաղխանան մի ծածկուած նեղ շուկայ է, մի շուկայ, որից Գ. Սունդուկեանը վերցրել է եւ շատերն էլ վերցնում են իրենց թատերգութեանց նիւթեր։ Ս.յդ անցքի մէջ խիտ առ խիտ դտնվում են բոլոր չթեղէն ծախողները։

Գծուծութիւն, շողոքորթութիւն, ըստորութիւն եւ փողապաշտութիւն թագաւորում են այդ մութ անցքերի մէջ, ուրտեղից մի անցորդ չէ կարող անցնիլ առանց կողոպտուելու եւ կամ մի որ եւ իցէ անպատուութիւն կրելու. խանութատէրն ունի սեպհական երկու–երեք դործակատարներ, որոնք զինուորների նման շարվում են անցքի երկու կողմը, բռնում են անցորդին, նախ միմեանց ձեռքիցը խլում, ապա քաշում են խանութը, տաս կոպէկանոց բանը մի մանէթով կապում են նորա գլխին, պատուով արձակում են եւ մի վրացերէն խուլ հայհոյանք էլ չեն մոռանում աւելացնել իրենց շողոքորթ ածականների ետեւից. եթէ կամք չունիս առնելու, քեզ չարչարում են, ծաղրում եւ ի վերջոյ կամքիդ վրայ բռնանում. հեշտ չէ մարդուս այստեղ մի օտարաղգի ձեւացնել իրեն, որովհետեւ բազաղխանայի աչակերտի դիտութեան ա, ֆն է տեղական բոլոր բնակուող ազգերի լեզուով գիտենալ հրաւիրելը։

Սիմոն Կարապետովը այս տեսակ վաճառականներից մէկն էր. ամբողջ օրը նա ինքը դոռում, վազվզում, քանդում եւ չինում էր, իսկ երեկոյեան քրտինքի մէջ թաթախուած, մինչեւ ժամը 8ը նստում եւ օրական հաշիւներն էր տեսնում. խանութը կողպելուց առաջ, դրամարկղն իւր գրպանն էր դատարկում, խանութի բանալիները հաշուետարակի հետ մի կարմիր թաշկինակի մէջ էր կապում եւ այդ երկար ճանապարհը նա գնում էր երկու ժամում, որովհետեւ չէր մոռանում ճանապարհին սորան նորան խօսեցնել, միւս օրուայ համար յաճախորդներ պատրաստել եւ հանդարտ քայլերով, մէջքը ծռած իւր տունն էր իջնում ժամը 10ին, երբ Վարդուհին արդէն քնած էր լինում կամ տիկին Հռիփսիմէի մօտն էր, կամ կարդում էր եւ կամ դրացի միւս օրիորդների հետ հաւաքուած փողոցի դրան վրայ խօսակցում էին։

Կարապետովը լուութեամբ ներս էր մըտնում, իսկոյն յօրանջում էր, մի կտոր հաց ուտում եւ պառկում էր քնելու. իսկ առաւօտեան ամէնքից շուտ էր զարթնում, մի քանի բուռ ջուր էր սրսկում երեսին եւ իւր կարմիր թաշկինակով սրբուելով հանդերձ փողոցն էր դուրս գալիս եւ իւր գործին էր գնում։ Բազաղխանան հասած նա տալիս էր բանալին արդէն եկող աշակերտներին եւ թէյ բերել տալով, նստում էր իւր խանութի առջեւ, գլխին էր հաւաքում խանութի գործակատարներին և զուարճանում էր նոցա հետ կատակաբանելով։

Վարդուհւոյ մօրաքոյրը մի երեսնամեայ կին էր, դեռ եւս գեղեցիկ տեսքով, հանդարտ եւ բարի բնաւորութեամբ. նա սիրում էր Վարդուհիին ինչպէս իւր աղջկան, որովհետեւ 12 տարի էր որ ամուսնացել էր, բայց որդի չունէր։ Սիմոն Կարապետովը հաւանել էր նորան այն պատճառով, որ Օլինկան իւր հետն էր բերում Կարապետովին 2,000 ռուբլիի մի դրամագլուխ. այդ միջոցներումն էր, որ Վարդուհւոյ հայրն և մայրը վախճանում են, Կարապետովը իւր հոգաբարձութեան տակ է առնում աղջկան իւր եղբօր հետ, ծախում է նոցա ինչքը եւ նոցանից գոյացրած 5,000 ռուբլին միացնելով 2,000ի հետ, հիմն է դնում Բազաղխանայի իւր մեծ մթերանոցին. իսկ Գը-

բիդորին — Վարդուհուոյ եղբօրը, նա յաջողվում է գլխիցը «ռադ» անել. աղաչում է Ներսէսեան դպրոցի հոգաբարձուներից, լզում է նոցա ոտքերը, երդվում է որ Գրիդորը ոչինչ չունի եւ ի վերջոյ յաջողվում է նորան իրը որդեգիր ընդունել տալ դպրոցում:

Վարդուհուոյ համար նա չէր հոգում, աղջիկը գեղեցիկ էր եւ նորա շահամոլ ձեռքին մի լաւ վոդ կտրելու մեքենայ կարող էր լինել: Նախ եւ առաջ պէտք էր օծել մեքենայն, ուստի նա Վարդուհուոյն տուաւ Գայիանեան դպրոցը եւ չէր խնայում ո՛չ մի ծախս աղջկայ ուսման եւ դեղեցկութեան համար:

—Փողն է որ վոդ է բերում, ասում էր նա միշտ:

Թէ ի՞նչպէս տիկին Հռիփսիմէն ծանօթացաւ Վարդուհուոյ հետ, այդ հեշտ էր. տիկինը դիտէր մաքուր հայերէն խօսել, իւր դերերից սովորած «փքուն» նախադասութիւններ եւ բանաստեղծական կտորներ յեղյեղել. նա շատ հեշտութեամբ խօսակցութիւն բաց արեց աղջկայ հետ եւ շուտով դրաւեց այդ երախային դէպի իրեն:

Պէտք էր աւելին անել, այսինքն մանկամարդուհուոյն իւր ազդեցութեան տակը առնել. ուստի նա սկսեց ասել, որ ինքը ծանօթ է եւ մտերիմ Տփխիսի բոլոր մեծամեծների եւ հարուստների հետ, նոցա տներում նա ազատ մուտք ունի. սկսեց պատմել աղջկան հազար եւ մէկ շինծու սիրոյ պատմութիւններ, թէ ի՞նչպէս Զիմախովի, Թամամիէվի, եւ մեծ մարդերի որդիքները սիրահարուել էին իւր վրայ, իսկ ինքը մերժել էր նոցա սէրը, որովհետեւ այդ երիտասարդները անշնորք եւ անքաղաքավարի էին... սատանա՜ն գիտէ, ինչե՛ր էր լեցնում խեղճ միամիտ աղջկայ գլխի մէջ եւ ո՛չ ոք թող չը զարմանայ, որ Վարդուհին արդէն Նիկոլային հանդիպելուց առաջ գիտէր սէրը եւ այնպէս շուտով անձնատուր եղաւ երիտասարդին:

Նա արդէն ունէր սիրոյ մի իդէալ եւ այդ Նիկոլան եղաւ:

Տիկին Հռիփսիմէն ամաչկոտ Վարդուհիից չինեց մի միշտ ժպտող, քա՜հ քա՜հ ներ արձակող եւ շատախօս պչրուհի, սովորեցրեց նրան երիտասարդների «կոմպլիմենտներ»ը սիրել, ժպտիլ նոցա եւ ծաղրել միանգամայն:

Իսկ երբ տիկինը Վարդուհուոյ մօրքրոջ մօտն էր դանվում եւ Օլինկայ տիկինը երբեմն երբ «համբոյր» բառն էր արտասանում, Հռիփսիմէն կարմրում էր եւ գլուխը կրծքի վրայ կախում 16 տարեկան մի օրիորդի նման. երբ Օլինկան խօսք էր բաց անում իւր ամուսնոյ վրայ, Հռիփսիմէն անհնան ճարտարախօսութեամբ հաւատացնում էր, որ ինքը իւր ամուսնոյ համար հոգի էր տալիս...

—Ինչ սուրբ եւ ազնիւ կին է, մտածում էր տիկին Օլինկան եւ միշտ ասում էր Վարդուհիին.

—Աղջիկս, միշտ լսիր Հռիփսիմէին եւ կատարիր նրա խրատները, նրա նման լաւ կին ես դեռ ես չեմ տեսել:

Վարդուհին դորանով աւելի անձնատուր էր լինում հրէշ կնոջը եւ սա իւր զոհից պատրաստում էր մի դերասանուհի, մի օր բեմ դուրս բերելու և ապա այն տեղից դերասանների դիրքը ճգելու մի արարած: Ամէնքն էլ դիտեն, որ թատրոնի սրահը կը լեցուի եթէ ազգի վրայ մեծ եւ սեւ տառերով դրուի.

«Առաջին անգամ կը խաղայ օր. Վարդուհի Թառումեանը»:

Մի քայլ եւս եւ ահա Վարդուհին բեմ եւ բեմից վիհը կը բարձրանար եւ կ'ինքնէր, երբ Նիկոլան հանդիպեցաւ նրան եւ աղջիկը բեմ չը բարձրացած, ընկաւ իւր երազած իդէալի — մի երիտասարդի գրկում:

Ը.

ՓՈՂ ԿՏՐԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՅՆ

—Տեսնո՞ւմ էք, պարոն Կարապետո՛վ — մինչեւ այժմ 1,000 մանէթի ապրանք էք տարել եւ դեռ ես չէք վճարել ոչինչ:

—Ես ձեզ խսկոյն կը վճարեմ, Արտեմ Մասէյի՛չ, — բայց եթէ քիչ մ'առաջ վճարելու դժուարութիւններ մէջտեղ բերի, այդ նորա համար էր, որ աչքի առաջ ունէի ձեր պրկած ապրանքների կէսի չը ծախուիլը:

—Ի՞նչ էք ասում, գոչեց Արտեմ Մասէյիչը դէմքը խոժոռելով — իմ ապրանքներս միթէ վատե՞ր են:

—Ո՛չ, բացագանչեց Կարապետովը համոզողական ձեւով — ես այդ չեմ ուզում ասել, այլ այն, թէ առեւտուրը հետզհետէ ընկնում է եւ . . .

—Ի հարկէ կը ընկնի, միջահասակ նորան Մասէյիչը — երեւակայի՛ր, եղբայր, դու ինձնից ապրանք ես տանում եւ փողը չես վճարում մի ամսոյ չափ, դորա տոկոսը ես ստանալու փոխարէն դու ես ստանում, ուրիշն էլ քեզ հետ այդպէս է վարվում եւ այդ ուրիշի հետ էլ մի ուրիշը . . . բացի նորանից . . . ա՛, ա՛ . . . խնդրեմ, մի՛ նեղանաք, Սիմոն Կարապետո՛վ . . . ես ձեզ համար չեմ ասում, . . . բացի դորանից . . . .

—Սասցէք ձեր փողերը, միջահասակ նորան պաղութեամբ Սիմոնը եւ դրապանակից հանելով տաս հատ հարիւրանոց դրաւ սեղանի վրայ :

Այս խօսակցութիւնը պատահում էր Բազմխանայի երկրորդ բաժնում գտնուող մի մեծ խանութի մէջ :

Խանութի մէջ լեցուած կտորների մէջ տեղ, մի սեղանի առջեւ, նստել էին այդ երկու վաճառականները . խանութի զանազան կողմերում հինգ գործակատարներ միմեանց վրայ էին դարսում կտորների «թոմ» երը եւ կարգի էին դնում, իսկ սեղանի վրայ դրուած լուսամփոփով լամպը մի տխուր լոյս էր ծաւալում այդ ընդարձակ միթերանոցի մէջ :

Երեկոյեան ժամ 7 ն էր մօտաւորապէս :

Արտեմ Մասէյիչը մի միջահասակ սաստիկ գէր մարդ էր, փորը չափազանց դուրս ցցուած, փոքրիկ գլուխը մտած իրանի մէջ եւ կարճ հաստ ոտները դուրս ցցուած այդ տիկից, մի տիկ իւր երկու վերին եւ երկու վարի ուռած անդամներով : Արտեմ Մասէյիչը 45 տարեկան էր, միրուքը գերծած, իսկ գլխի սակաւ մազերի մէջ երեւում էին հատ հատ սպիտակներ : Բաւականին դեղեցկադէմ էր նա, ինչպէս որ լինում է ամէն մի Կախեթու գինի խմող դէր Տիխոնեցին : Աչքերը փոքր, բերանը մեծ, ականջները երկար ու խոշոր, ձեռները փոքր եւ մատները ուռած ու սպիտակ, որոնց մէկի վրայ փայլում էր կանաչ քարով ոսկեայ մատանին :

Նա կռացել էր սեղանի վրայ, ձեռքի գրիչով խաղխզում էր մի թղթի կտորի վրայ եւ փռնչում էր մի կողմից : Գէր մարդիկ ընչառութեան տեղ փռնչում են : Արտեմ Մասէյիչը շատ հարուստ վաճառական էր . թէեւ Սիմոն Կարապետովն էլ պակաս հարուստ չէր, բայց Մասէյիչը երեւելի էր իւր ահագին քանակութեամբ ապրանքներ բերել տալով եւ շատ առեւտուր ունենալովը :

Մոսկվայի Մօրոզովի եւ այլոց չթեղէնների գործարանները մեծ քանակութեամբ ապրանքներ էին ուղարկում նրա եւ Մասէյիչը լաւ յարաբերութեանց մէջ էր նոցա հետ, եւ մեր դէր պարոնի ապրանքներից շատերը ծախուելուց յետոյ երբ վատը կամ փտածն էին դուրս գալիս,

—Ես ի՞նչ անեմ, եղբա՛յր, արդարացնում նա իրեն — գործարանատէրն է մեղաւոր, շնորհակալ եմ որ յայտնեցիք, ես այլ եւս նորանից ապրանք չեմ բերել :

Բայց մի ամիս յետոյ վաճառականները տեսնում էին, որ նորէն նոյն գործարանից ապրանք եկաւ Մասէյիչին, որովհետեւ, ասում էր սա, գործարանատէրը խոստացել էր առաջին անկարգութիւնները չը գործել :

Ի վերջոյ Արտեմ Մասէյիչը սաստիկ խորամանդ, փողապաշտ եւ ստոր վաճառականների թագաւորն էր. նրան ո՛չ ոք կարող էր խաբել, բոլորը նորանից խաբվում էին :

Եւ այսպէս, Մասէյիչը և Կարապետովը հաշիւ էին տեսնում :

—Նեղացա՞ք, Սիմոն Կարապետով, ժըպտեց Մասէյիչը — է՛, ազնի՛ւ, այդպէս բաներից մի՞թէ կարելի է նեղանալ . . .

—Ե՞ս, միջահասակ Սիմոնը — ես ձեզնից նեղանա՞մ, Արտեմ Մասէյի՛չ, Աստուած ո՛չ անի, դուք իմ թեւ թիկունքն էք, ես ձեր ամենախոնարհ ծառան :

—Է՛ է՛, պարոն Սիմո՛ն, ասաց վեհափառութեամբ Մասէյիչը փռուելով աթոռի մէջ — զօրանա՛ս, մենք ամէնքս էլ եղբայր ենք, ես քո լաւութիւնդ եմ ուզում միշտ, Աստուած գիտէ, դու էլ ի հարկէ իմ լաւութիւնս . . . ապա՛, մէկ մէկ գինի կոնծենք, ի՞նչպէս ես մի թաս Կախեթու հետ :

—Շնորհակալ եմ, Արտեմ Մասէյիչ — ես տուն եմ գնալու, խանութս էլ չեմ կողպել :

—Է՛, հէ՛ր օրհնած, ի՞նչ ես շտապում . .

դիտեց Մասէյիչը խօսքերը ծանր ծանր հանելով բերնից եւ երկարցնելով — դեռ նոր մթնացաւ, ես դեռ քեզ շատ բան պիտի ասեմ... հա՛, նոր միտս եկաւ, ա՛յ, այսօր լաւ Մօրօզովի կտորներ ենք ստացել, կ'ուզես վաղը ղրկիր մի քանի թոփ տար և տես։

—Շատ լաւ, վաղը կ'ուղարկեմ աշակերտին, տուէք բերի։ Եւ դեռ իմ ապրանքներս չեմ ստացել, անիծածները շատ ուշացրին...

—Մօրօզո՞վ է ապրանքդ։

—Այո՛, Արտեմ Մասէյի՛չ, երկու ամիս է որ փողը ղրկել եմ։

Արտեմ Մասէյիչը խորհրդաւոր կերպով ժպտեց, որովհետեւ յիշեց, որ ինքը մի ամիս առաջ գրել էր գործարանատէրին, որ Կարապետովի ապրանքները ուշացնեն։ Կարապետովը տարին մի քանի անգամ էր միայն ապրանք բերել տալիս, իսկ Մասէյիչը մի՛շտ, ուստի գործարանատէրը չէր ուզում իւր երեւելի յաճախորդի սիրտը կոտրել եւ կամ կաշառք ուտելու յարմար միջոցը ձեռքից թողնել։

—Սիմոն Գասպարիչ, ասաց յանկարծ Արտեմը ձեռքի գրիչը վայր ձգելով — ես իմ Աստուած, որ ես քեզ շատ սիրեցի, դու լա՛ւ մարդ ես եղել։

—Շնորհակալ եմ, Արտեմ Մասեյի՛չ, Աստուած հաստատ պահէ։

—Ողջ լինես, Սիմոն Գասպարի՛չ, դորա համար էլ ես կամենում եմ քեզ հետ մի կարեւոր բանի համար խորհրդակցել։

—Ի՞նչ էք ասում, գոչեց Սիմոնը ուրախութիւնից կարմրելով — ես արժանի չեմ...

—Լա՛ւ, լա՛ւ, միջահատեց Նորան դէր տիկը — ես քեզ լաւ եմ ճանաչում, Նորա համար էլ մինակ քեզ եմ ասում այս։

—Շնորհակալ եմ, Աստուած որդիքդ պահէ։

—Սաղ ըլես, համա՛ դեռ որդիքը մէկ կողմը թող, դու այն ասա, ասաց Մասէյիչը ձայնը մեղմացնելով եւ խորհրդաւորապէս դէպի նա կռանալով — դու այն ասա, լաւ չի՞ լինիլ, որ մի ընկերութիւն կազմենք։

—Ընկերութի՞ւն, ի՞նչ ընկերութի՛ւն։

—Մի «Կամէրչսկի Կոմպանիյ» (*)...

(*) Առեւտրական ընկերութիւն։

չէ՞ս իմանում... բայց... այս թող մնայ մի ուրիշ անգամ, երբ մինակ կը լինինք, այն ժամանակ կը խօսինք։

—Շահաւէ՞տ բան է, հարցրեց Սիմոնը հետաքրքրութեամբ։

—Օ՛հ, հարիւրին քսա՛ն շահաւէտ, ասաց Մասէյիչը նշանակութիւն տալով խօսքերին։

Յանկարծ մի միտք ծնաւ Սիմոնի գլխի մէջ, նա ձեռքը ճակատին տարաւ եւ պահ մի լռելուց յետոյ.

—Արտեմ Մասէյի՛չ, դարձաւ նա դիրուկին — եթէ կ'ուզէք, վաղը երեկոյեան թէյի հրամեցէք մեր տուն եւ խօսինք այդ մասին։

—Լա՛ւ, լա՛ւ, կը գամ։

Տուն դառնալով Սիմոնը նայեց Վարդուհիի չքնաղ դէմքին եւ մրմռաց. —Խոզին գրաւելու, դիւթելու չափ գեղեցիկ է։

—Ա՛յ կնի՛կ, ասաց նա իւր կնոջ, երբ անկողին էր մտել — վաղը երեկոյեան մի մեծ մարդ հետ ունիմ, սենեակը լաւ կը մաքրես եւ թէյը Վարդուհին կը տայ։

—Փեսա՞յ է, հարցրեց ժպտելով կինը։

—Աստուած տայ, մի ոչխար մատաղ կ'անեմ թէ ասածդ լինի, մրմռաց Սիմոնը։

Թ.

ՍԻՄՈՆԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ

Բաղաղխանայի այդ դէպքը պատահել էր մի ամիս առաջ ա՛յն օրուանից, երբ Նիկոլան սիրահարուեցաւ Վարդուհիի վրայ, ուստի թատրոնի երկրորդ օրը, Արտեմ Մասէյիչը, որը մի քանի անգամ տեսել էր օրիորդին եկեղեցւոյ եւ նոյն իսկ տան մէջ եւ հաւնել էր, մարդ ուղարկեց որ Սիմոն Կարապետովին իւր խանութը կանչեն։

—Մի կարեւոր գործի համար, աւելացրել էր դրդակատարը խորհրդաւոր ձայնով։ «Կամէրչսկի» ընկերութեան խնդիրը մինչեւ այդ օրը մնացել էր առ կախ եւ Կարապետովը մտածեց այդ օր վճռել այդ ընկերութեան հիմնարկութիւնը։

Արտեմ Մասէյիչը լուրջ դէմքով հրաւիրեց Կարապետովին նստիլ, գործակատարին ակնարկեց, որ հեռանայ խանութի ներսը

և ճկոյթի եղունգովը միւս ճկոյթի եղունգը քերելով ուզեց խօսիլ, հազաց, կարմրեց եւ լռեց։

Երեւի խօսելիքը դժուար էր, ուստի չէր համարձակվում։

—Արտեմ Մասէյիչ, խզեց Կարապետովը լռութիւնը — դուք ինձ կանչե՞լ էիք։

—Հա՛, եղբա՛յր, հա՛... հը՛մ... մի խօսք ունէի։

—«Կամէրչէսկի» ընկերութեա՞ն մասին։

—Հա՛, օրհնած հոգի՛, հէնց այդ էր, լաւ գտար, ես ուզում էի խօսիլ, բայց չէի իմանում թէ որտեղից սկսիմ. մէկ էլ որ մը-տածում էի թէ կարելի է մոռացել ես...

—Աստուած ո՛չ անի, Արտեմ Մասէյիչ — ի՞նչպէս կը մոռնամ մի այդպիսի բան, ես ամենայն սրտով պատրաստ եմ հրամանոցդ ծառայութեան։

—Ողջ լինիս, եղբա՛յր, բայց այդ ընկերութիւնը հաստատելը ախր դժուար է...

Եւ նա այս ասելով ուղղակի Կարապետովի աչքերի մէջ նայեց։

—Ի՞նչ դժուարութիւն կայ, հարցրեց Սիմոնը — փողի բան չէ՞...

—Ի հարկէ, ի հարկէ, ասաց արագութեամբ Մասէյիչն եւ ապա միւս խօսքերը սկսեց ծանր ծանր եւ շեշտելով արտասանել — բայց գիտե՞ս ինչ կայ, Սիմոն Գասպարիչ... ը՛ը՛ը՛մ... փող չա՛տ կ'ուզի, գիտե՞ս, չա՛տ։

—Գիտեմ, Արտեմ Մասէյիչ — մեծ գործերի համար միշտ մեծ գումար պէտք է։

—Ա՛յ, շատ ապրիս, տեսա՞ր... դու իմ ուզած մարդն ես, է՛է՛, լա՛ւ, ասենք տէրութիւնից իրաւունք առինք, բաղաքանումը մի սենեակ վարձեցինք, բայց ի՞նչ հարկ կայ մի սենեակի էլ փող տալ, ահա այն տեղ դրասենեակ կը լինենք։

Նա ցոյց տուաւ կողքի մի մութ սենեակ, ուր դարսուած էին կոտրտուած արկղեր։

—Յետոյ, շարունակեց նա — քո կարծիքով ո՞րքան փող պէտք է։

—Ես 5,000 մանէթ կը դնեմ այդ գործի համար։

—Վա՛... գոչեց Մասէյիչը զարմացած եւ Սիմոնի երեսին նայեց — կատակ չե՞ս անում խօ, այդ փողը ուրեմն կանխիկ դնո՞ւմ ես։

—Այո՛, դնում եմ, ասաց Սիմոնը լրջութեամբ։

Արտեմ Մասէյիչը սկսեց ճկոյթով ծոծրակը քերել եւ դաղտագողի ժպտով Սիմոնին նայել. նա մտածում էր և մի դեղեցիկ ծրագիր էր պատրաստում թէ ի՞նչպէս մաշկէ այդ ինքնիրեն թակարդն ընկած աղուէսին. մի կողմից էլ նա ճանաչած լինելով Սիմոնի խորամանդութիւնն, ուզում էր իմանալ թէ այդ գումարը նա անկեղծօրէն տալի՞ս էր, թէ դորա տակ իրեն դէմ մի դաւ կարնիւթուած։

—Ի՞նչ էք մտածում, Արտեմ Մասէյի՛չ, հարցրեց Կարապետովը։

—Ը՛ը՛ը՛մ, ոչինչ... ասաց Մասէյիչը ծոծրակը թողնելով — իժում կատակ չե՞ս անում, հը՛, Սիմոն Գասպարիչ, դու լինիս քո Աստուածը, ուղիղ խօսի՛ր...

—Վա՛, գոչեց Սիմոնը — հէ՛ր օրհնած, ի՛նչ կատակի բան է որ...

—Տալի՞ս ես է՛լի... 5,000 մանէթը։

—Տալիս եմ։

—Կանխի՞կ։

—Կանխիկ։

Արտեմ Մասէյիչը մի վայրկենաչափ մը-տածեց եւ ապա ձեռք դէպի նորան պարզելով.

—Ձեռքդ տուր, Սիմոն Գասպարի՛չ — հոգի՛ մարդ ես, հոգի՛...

Բայց գիտէ՞ք ինչ, Մասէյիչի Սիմոնին կանչելու մէջ բոլորովին ուրիշ նպատակ կար. այլ երբ այս խնդիրն երեւան եկաւ, նա մոռացաւ իրենը, բոլէական արագութեամբ իւր ծրագիրը կազմեց եւ ձեռքը Սիմոնին մեկնեց։

Սիմոնը ժպտելով սեղմեց նորա ձեռքը։

—Այժմ, ասաց Մասէյիչը զուարթ դէմք ստանալով եւ ձեռքերը շփելով — ընկերութիւնը կազմեցինք, այնպէս չէ՞։

—Այդպէս է։

—Դու հինգ հազար, ես էլ չորս... ո՛չ, ես էլ հինգ հազար դրինք, չէ՞...

—Դրինք, Արտեմ Մասէյի՛չ։

—Բո հոգուն մեռնիմ, Սիմոն Գասպարի՛չ, հոգի մարդ ես, իմ արեւը գիտենայ...

—Շնորհակալ եմ, Աստուած արեւդ պահէ։

—Ողջ լինիս... Բայց գիտե՞ս ինչ կայ... յարեց Մասէյիչը Դոն Ֆիշոտական կերպա-

բանք ստանալով — մի քանի օրից ո՛ղջ Բազպեղեանան կ'իմանայ ո՛ւ . . . ողջ առեւտուր ձեռք կ'առնենք , կը զարնենք , կը փշրենք , լաւ չէ՞, հա՛:

Եւ նա սկսեց մի առողջ եւ զուարթ ծիծաղ արձակել:

—Այդ պէս է , Արտեմ Մասէյի՛չ , բայց...

—«Բա՞յց» էլ կայ . . . հարցրեց Մասէյիչը վախեցած եւ շունչը պահելով:

—Ի հարկէ կայ , ժպտեց Սիմոնը — չէ՞ որ պայմանագրութիւն պէտք է գրել:

—Վա՛, հէր օրհնած , գոչեց Մասէյիչը ազատ շունչ առնելով — վախեցայ տո՛ . . . կարծեցի թէ ուրիշ բան է եղել:

—Ո՛չ , ուրիշ բան չը կայ . . .

—Պայմանագիրը հեշտ է , միջահատեց Մասէյիչը — կ'ուզես վաղը եւ եթէ կ'երթանք նոտարի մօտ , պայմանագրութիւնը կը կապենք ու . . .

—Արտեմ Մասէյի՛չ , միջահատեց նրա Սիմոնը ծանրութեամբ եւ լրջութեամբ — ներողութիւն , մի քանի խօսք ասեմ:

—Ասա՛, ասա , թէկուզ տասը . . .

—Այ թէ ինչ , խօսեց Սիմոնը , — դու խօ լաւ գիտես, որ վերջին ժամանակներում իմ առեւտուրս լաւ չէր գնում, ապրանքները բոլորը փչացած . . .

—Լա՛ւ , լա՛ւ , դրանք թող , միջահատեց Մասէյիչը տեսնելով որ իւր տուած փտած ապրանքների խօսքն է մէջ տեղ գալիս — ուրիշ ի՞նչ կայ . . .

—Այ ասեմ, շարունակեց Սիմոնը — բոլորը կարծում են թէ ես չա՛տ հարուստ եմ, բայց Աստուած գիտէ , Արտեմ Մասէյի՛չ , որ բոլորից աղքատը ես եմ:

Մասէյիչը դէմքը խոժոռեց եւ այդ նկատեց Սիմոնը , ուստի ,

—Այսինք , վրայ տուաւ — այնքան էլ աղքատ չեմ, որ չը կարողանամ 5000 մանէթ հաւաքել, բայց այդ փողերը իմը չեն:

—Վա՛ . . . գոչեց Մասէյիչը նրա երեսին նայելով — ի՞նչպէս թէ քոնը չեն:

—Այսինքն իսկապէս իմը չեն , այլ իմ կնոջ հանգուցեալ քրոջ որդիներին:

—Այդ պէ՞ս . . . գիտեց Մասէյիչը լրջութեամբ — ուրեմն փողերը . . .

—Վարդուհիին եւ իւր եղբօրն են . . .

—Հը՛մ . . . արաց Մասէյիչը նորէն ծոծրակը քերել սկսելով — խնդիրը կնճիռներ է ստանում, ուրեմն այդ աղջիկը այդքան հարո՞ւստ է:

—Այո՛, այսինքն 2000 բուբլու չափ մի գումար ունի:

Մասէյիչը սկսեց մտածել եւ Սիմոնը նորան նայիլ սուր աչքերով:

—Իմ դրամագլուխս այդ աղջիկն է , աւելացրեց նա:

Մասէյիչը դողաց , նա հասկացաւ այդ խօսքերի միտքը:

Անցաւ այդպէս մի լուռ րոպէ , Մասէյիչը անդադար քերում էր ծոծրակը եւ քունքերը , իսկ Սիմոնը իւր ակնարկը սեւեռած նրա վրայ , սրտատրոփ սպասում էր:

—Բայց . . . խզեց Մասէյիչը լռութիւնը — ախր 5000 է պէտք ընկերութեան համար:

—Այո՛, ծիծաղեց Սիմոնը — ես էլ տալիս իմ քեզ 5000 մանէթը:

—Վա՛ . . . գոչեց Մասէյիչը — բաս ասում էիր , որ 2000 է:

—Աղջիկը 3000 չարժէ՞ . . .

Մասէյիչը գլուխը կրծքի վրայ կախեց , Սիմոնը մօտեցաւ նրան , ձեռքը նորա ուսին դրեց եւ ասաց ծանրութեամբ .

—Արտեմ Մասէյի՛չ , իմ դրամագլուխս այդ է:

—Դժուար է , եղբա՛յր , . . . մրմռաց Մասէյիչը:

—Դու գիտես , մտածի՛ր , ասաց Սիմոնը— 2000 բուբլի եւ մի սիրուն աղջիկ 5000 բուբլիի փոխարէն . . . մտածի՛ր . . . յարեց նա եւ կրունկի վրայ դառնալով դուրս գընաց խանութից:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
(Շարունակելի)

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՐԱՆԴ ԶՕՐԱՊԵՏԻՆ ԹԱՂՈՒՄԸ

Ա.

Նիւ-Եորք , օգոստոս 11 ,

Զօրապետին մահուան եաքն անմիջապէս լուր ղրկուեցաւ ի Սարադոկա , որ է Մաք Կրէկոր լերան մերձադոյն քաղաքն ուր կ'երթան հարուստ ընտանիքներ Նիւ-Եորքէն և

ուրիշ տեղերէ ամուսն անցուցնելու համար եւ ուղուեցաւ դիպատ մը հանդուցելոյն մարմինը պատելու եւ սառի մէջ պահպանելու, մինչեւ որ Նիւ-Եորքէն հասնէր երեւելի դիպատ մը մարմինը զմուսելու եւ ուրիշ կարգադրութիւններ ընելու։

Քսան վայրկեան էտքը հեռագիր զարնուեցաւ Հարդ Փորդ քաղաքն երեւելի անդրիագործի մը դալ ի Մաք Կրէկօր հանդուցելոյն կաղապարն առնելու։ Անդրիագործն եկաւ ժամանակին եւ մի քանի տեսակ կաղապար առաւ։ Ուրիշ շատ արուեստագէտներ դացին զօրապետին պատկերն առնելու ճիշդ այնպէս ինչպէս կ'երեւէր ի մահուան։ Արուեստագէտներէ քիչեր միայն կրցան հասնիլ իրենց նպատակին։ Նիւ-Եորքէն երեւելի դիպատն առանց ժամանակ կորսնցուցնելու գնաց Մաք Կրէկօր լեռն եւ ամբողջացուց զմուսելու գործն։ Մեծ քաղաքացւոյն դէմքը շատ քիչ փոփոխութիւն կրեց թէ՛ զմուսելու ատեն, եւ թէ՛ տասն եւ եօթն երկար օրերու մէջ յորս մնաց անթաղ ի տես բիւրաւոր մարդոց։ Հանդուցելոյն վրայ առաջին ծաղիկ փունջը դրին իւր երեց որդւոյն եւ զինքը դարմանող բժշկին փոքրիկ աղջիկներն որ անտառէն վայրի ծաղիկներ ժողվելով իրենց սպասուհեաց օգնութեամբ կապեցին փունջ եւ բերին դրին մեծանուն զօրապետին դլխոյն վերեւ։

Իւր սիրելի ամուսնոյն մահը Տիկին Կրանդի վրայ այնչափ խորին տպաւորութիւն ըրած եւ անոր այնպիսի ծանր հարուած մ'եղած էր որ պահ մը տիկնոջ կենաց համար մեծ երկիւղ տեսնուեցաւ։

Սարադոկայէն եւ ուրիշ տեղերէ խուռն բազմութիւն շարունակ կը դիմէր Մաք Կրէկօր լեռը։ Հարիւրաւոր զինուորական խումբերէ առաջարկութիւններ եղան երթալ զօրապետին մարմնոյն պահպանութիւն ընելու, եւ իրեւ պատուոյ պահանորդք յարգանք մատուցանելու մեծ զօրապետին։

Հինդշաբթի դիշեր Տրըմ զօրապետն իբրեւ ներկայացուցիչ Միացեալ Նահանգաց նախագահին Վաշինկտոնէն չոգեկառք նստաւ Մաք Կրէկօր լեռն երթալու, ունենալով նախագահէն առ Տիկին Կրանդ գրուած նամակ մը, յորում Մր. Գլիվլէնտ կը յայտարարէր թէ ինք պատրաստ եւ յօժար էր լիովին կատարելու Տիկնոջ ամէն փափաքն իւր ամուսնոյն մատուցուելու պատուոյ եւ յարգանաց մասին։ Տրըմ զօրապետը խորհրդակցեցաւ հանդուցելոյն ընտանեաց հետ թաղման կարգադրութեանց եւ տեղւոյն վրայ։ Զօրապետն թարգման հանդիսանալով Ամերիկացւոց մեծագոյն մասին կարծեաց և փափաքանաց, յայտարարեց թէ վայելուչ էր ազգային կառավարութեան վրայ թողուլ յուղարկաւորութեան կարգադրութեանց բոլոր հոգը։ Վասն զի, ըսաւ, հանդուցեալ զօրապետը կը վերաբերէր բոլոր երկրին, եւ բոլոր ազգն երախտապարտ էր անոր, նա եւ մեծ Քաղաքացին կանոնաւոր բանակի զօրապետ էր երբ մեռաւ։ Թաղման տեղւոյ մասին հասարակաց կարծիքը բաժնուած էր։ Շատեր կը պնդէին թէ ազգին դիւցազնը ազգին մայրաքաղաքին մէջ թաղուելու էր։ այլք կ'ըսէին թէ Նիւ-Եորք է մեծագոյն քաղաքն Ամերիկայի, եւ կը վայելէր Նիւ-Եորքի հասարակաց վայրերէն մէկուն մէջ տալ զօրապետին նշխարաց վերջին տեղի հանդստեան։ Զօրապետն եւս ի կենդանութեան փափաք յայտնած էր թաղուիլ սա երեք տեղերէն մին, այսինքն կամ ի Ուէսթ Բուէնդ, ուր զինուորական վարժարան մնած էր, կամ ի Կալէնա, ուր կը բնակէր մինչեւ քաղաքային պատերազմին սկիզբն, եւ կամ ի Նիւ-Եորք զոր ընտրած էր իւր վերջին բնակութեան տեղի եւ ուր ստացած էր շատ բարեկամներ։ Գնդապետ Ֆրէտէրիք Կրանդի բոլոր խօսքերէն յայտնի կ'երեւէր թէ իւր մեծանուն հայրը մահուանէ առաջ կարծիք յայտնած էր թէ կ'ընտրէր թաղուիլ ի Նիւ-Եորք, եւ սա մէկ պայմանը կը դնէր որ իւր սիրելի կինն եւս մահուանէ ետքը դրուէր իւր քով, եւ երկոցուն ոսկերք ի միասին հանդչէին։ Այսպէս յետ խորհրդակցութեան ի մէջ հանդուցելոյն ընտանեաց եւ նախագահի ներկայացուցչին, Տրըմ զօրապետին, որոշուեցաւ մեծ զօրապետին մարմինը թաղել Նիւ-Եորքի հասարակաց պարտէզներէն միոյն մէջ, ինչպէս որ Նիւ-Եորքի քաղաքապետութիւնը փութացած էր առաջարկել եւ նուիրել յարմար տեղ մը։ Ի սկզբան անդ Նիւ-Եորքի Կեդրոնական պարտէզին մէջ տեղ տալ խորհուած էր, սակայն այս մասին չհաւանու-

թեան խօսքեր եւ ուրիշ առարկութիւններ եղան։ Իսկ անոնք որ կը պնդէին թէ ազգի դիւցազնը թաղուելու էր ազգին մայրաքաղաքին մէջ, հանգուցելոյն ընտանեաց փափաքանաց առջեւ լուեցին։ Յուղարկաւորութեան բոլոր կարգադրութեանց հոգը կառավարութեան վրայ թողլու եւ թաղումը զինուորական հանդիսիւ կատարելու առաջարկութիւնն ընդունուեցաւ։ Ասոր վրայ Տրըմ զօրապետն երկար հեռագիր մը ղրկեց Հանգօգ զօրապետին ծանուցանելով թէ նախորդ նախագահ Կրանդի յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարուէր Նիւ-Եորքի մէջ զինուորական պատուով, եւ այս հանդիսին կարգադիր անուանուած էր Հանգօգ զօրապետը։ Յուղարկաւորութեան օրն որոշուեցաւ, եւ սկսան պատրաստութիւնք ամէն կողմ։

Յուլիս 14/26 ին կիրակի օր Ամերիկայի եկեղեցիներէն շատերուն մէջ ներբողական քարոզներ խօսուեցան ի յիշատակ Կրանդի, անոր քաջագործութիւններն հռչակուեցան եւ մատուցած ծառայութիւններն երախտագիտութեամբ յիշուեցան։ Քարոզներէն ոմանք այնպէս ազդու եւ սրտաշարժ էին որ յարտասուս փղձկեցուցին ունկնդիրները։ Նիւ-Եորքի նահանգին զօրաց ընդհանուր հրամանատարն հրատարակեց սա հրաման.

«Կրանդ, զօրապետ բանակի եւ ութ տարի նախագահ Միացեալ Նահանգաց, գովեստի պէտք չունի։ Երախտագէտ ժողովուրդ մը միշտ պիտի պահէ ի յուշի անոր անգնահատելի ծառայութիւններն եւ անձնուիրութիւնն առ հայրենիս տագնապի ժամանակներու մէջ ընդ որս անցաւ ազգն եւ յորս այնչափ նշանաւոր դերակատար մ'եղաւ Դիւցազնը։ Իբրեւ հարկ յարգանաց հանդուցելոյն յիշատակին այս նահանգին պահապան զօրաց պաշտօնակալք սգոյ սովորական ժապաւէններն եւ նշանները պիտի կրեն երեք ամիս, եւ հանդէսներու ատեն զօրադունդերու դրօշները սեւ շղարշի մէջ պիտի առնուին նոյնչափ ատեն։ Ազգային դրօշներ կայմերու կիսէն վար պիտի պարզուին բոլոր զինարաններու եւ ռազմամթերաց ամբարներու վրայ մինչեւ թաղման օրը։ Յուղարկաւորութեան օրն իւրաքանչիւր մարտկոցի հրամանատար պաշտօնակալը թնդանօթներ արձակել պիտի տայ արեւուն ծագելէն սկսեալ մինչեւ ժամը մէկին ամէն կէս ժամն անգամ մը։ Յուղարկաւորութեան հանդէսին բոլոր ժամանակը մանր թնդանօթներ պիտի արձակուին, եւ յաւարտ հանդիսին երեսուն եւ ութ թնդանօթի ձայնով ազգային ողջոյն պիտի տրուի»։

Ուրիշ նահանգաց հրամանատարք այս իմաստով եւ քիչ տարբերութեամբ հրամաններ հրատարակեցին։ Մեծ բանակին, այսինքն 1861-65 ի պատերազմին զինուորք հարիւրաւոր տեղեր ժողովներ գումարելով իրենց վաղեմի հրամանատարին յիշատակը պատուեցին գովեստի որոշումներով եւ ուրիշ ցոյցերով։ Կ'ըսուի թէ Մեծ բանակին զինուորներէն իբր 200,000 հոգի Հանգօգ զօրապետին խմացուցած են թէ անոր տրամադրութեան ներքեւ պատրաստ պիտի ըլլան որ եւ իցէ կերպով պատիւ ընելու հանդուցեալ զօրապետին։

Նիւ-Եորքի քաղաքապետին հրաւէրով երեւելի անձերէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուեցաւ ընդ նախագահութեամբ Միացեալ Նահանգաց նախորդ նախագահ Արդուրի դրամ հանգանակել ի պատիւ Կրանդ զօրապետին Նիւ-Եորքի մէջ մեծ յիշատակարան մը կանգնելու։ Հանգանակութեան գործը փութով յառաջ կը տարուի, եւ մինչեւ ցարդ քանի մը հազար լիրա ժողվուեցաւ։ Նոյնպէս եւ Շիդակոյի մէջ յիշատակարան մը կանգնելու համար յանձնաժողով մը կազմուեցաւ, եւ շատ դրամ հանգանակուած է։

Մերուանի սեւամորթ կառապանն, որ Կրանդ զօրապետին նախագահութեան ատեն անոր կառքը վարած էր, յատուկ նամակաւ խնդրած է որ յուղարկաւորութեան կառքը վարելու պատիւն իրեն շնորհուի, վասն զի կը փափաքի բան մ'ընել իւր սերելի տիրոջ եւ վերջին անգամ վարել կառքն որ կը տանի անոր մարմինն հանգստեան վայրը։

Ծաղկէ փունջեր, սիրոյ եւ սգոյ նշաններ ամէն կողմէն կը տեղան։ Մասնաւոր ուշադրութեան եւ նշանակութեան արժանի են յարգանքն եւ սէրը զորս կը մատուցանեն հանգուցելոյն յիշատակին Հարաւային նահանգաց բնակիչք որոց դէմ կռուեցաւ

Կրանդ, եւ որոց հետ թէ՛ յաղթութեան ատեն եւ թէ՛ պատերազմէն վերջը խաղաղութեան ժամանակ մեծ վեհանձնութեամբ վարուեցաւ։ Ցուզարկաւորութեան հանդէսն աւելի քան հնդետասան օր յետաձգուելուն մէկ պատճառն ալ այն է որ Արեւմուտքէն եւ Հարաւէն շատ մարդիկ ժամանակ ունենան Նիւ-Եորք գալու յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուելու համար։

Գնդապետ Ֆրէտէրիք Կրանդ օգոստոս 3ին յատուկ նամակաւ հրաւիրեց օտար տէրութեանց դեսպաններն եւ ուրիշ ներկայացուցիչներն ներկայ գտնուիլ իւր հօր յուզարկաւորութեան հանդիսին, խնդրելով որ հրաւէրն ընդունողք համին իմացունել Հանգօգ զօրապետին իրենց դիտաւորութիւնն, որպէս զի թափորին մէջ պատշաճ տեղ տրուի անոնց։ Կրանդ զօրապետին մարմինը յատուկ սնտուկներու մէջ վերջնական կերպով զետեղուելէ առաջ գընդապետ Կրանդ իւր հօր մատը դրաւ մատանի մը, եւ անոր գրպանը ծրարիկ մը։ Մատանին էր ընծայ զոր քանի մը տարի առաջ Տիկին Կրանդ տուած էր իւր ամուսնոյն որ կը կրէր զայն իւր մատը, բայց հիւանդութեան ատեն զօրապետը նիհարցած եւ մատուքները բարակցած ըլլալով մատանին մեծ կուդար մատին։ Ուստի եւ վերջին ժամերուն ատեն գրպանը պահուած էր։ Տիկին Կրանդի խնդրանօք մատանին դարձեալ զօրապետին մատը դրուեցաւ անոր հետ թաղուելու համար։ Ծրարիկն էր տիկնոջ պատասխանն հանդուցելոյն առ նա գրած վերջին խօսքերուն։ Ծրարիկին մէջ դրուած էին մաս մը տիկնոջ մազէն, սիրալի հրաժեշտի գիր մը, եւ հաստատ յոյս թէ վերստին պիտի տեսնէին զիրեար։

Նիւ-Եորքի քաղաքապետը Քաղաքապետական ժողովոյ որոշմամբ հարիւր նշանաւոր քաղաքացիներէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմեց մինչեւ Ալպանի երթալու եւ անտի ի Նիւ-Եորք ընկերանալու Կրանդ զօրապետին մարմնոյն։ Այս յանձնաժողովոյ անդամք կը կրէին իրենց կրծոց վրայ սաղէնէ ժապաւէններ, որոց վերի ծայրը գրուած էին «Նիւ-Եորք քաղաքը» խօսքերը։

Օգոստոս 3ին երեկոյին ի յիշատակ հանգուցեալ զօրապետին մեծ ժողով մ'եղաւ Նիւ-Եորքի մէջ սեւամորթներու յատուկ եկեղեցի մը։ Այս քաղաքին սեւամորթներուն ամէն աստիճանէն եւ կարգէն արք եւ կանայք ներկայ էին այս ժողովոյ։ Եկեղեցին սգոյ նշաններով զարդարուած էր, և բեմին վրայ դրուած էր դագաղ մը զօրապետին պատկերով։ Ատենաբաններէն մին ըսաւ թէ Կրանդ զօրապետին ազնիւ ոգին միշտ պիտի յիշեն սեւամորթք։ «Գերիներու ոտքէն խորտակեալ շղթաներն», յարեց բեմբասացը, «յամր վկաներ միայն են անոր յաղթութեան։ Արդարութիւնը պաշտպանելու ատեն երեսը դարձուց առ թշնամին Ուէլլինկդընի արութեամբ, Բրուտոսի առաջադրութեամբ, Պոնաբարդի յամառութեամբ»։ Երեսուն եւ ութ մանկամարդ սեւամորթ կիներ սպիտակազգեստ գացին զարդարել դագաղը պսակներով եւ ծաղիկներով։ Այս ժողովոյ մէջ տրուած որոշմանց մէկ մասը հետեւեալն է.

«Մենք այս քաղաքին սեւամորթ մարդիկը, կը հաւատանք թէ այս երկրին մէջ գտնուած բոլոր սեւամորթներուն զգացման թարգման հանդիսացած կ'ըլլանք երբ կը յայտարարենք թէ Կրանդ զօրապետին մահուամբ սեւամորթաց ցեղն Ամերիկայի մէջ կորցուց մին իւր ճշմարտագոյն բարեկամներէն եւ պաշտպաններէն, մարդ մը բառին բովանդակ նշանակութեամբ որոյ անյողդողդ ուղղութիւնն եւ կորովն եւ անհնարաւոր կամքն ըրին տեւական եւ ապահով այս մեծ երկրին ամէն քաղաքացւոյ ազատութիւնը։ Կը խառնենք մեր արտասուքն աշխարհի արտասուաց, եւ կը նուիրենք զանոնք արդի ժամանակաց մեծագոյն մարդոյն յիշատակին։ Մեր ժողովրդեան երախտագիտութիւնը պիտի տեւէ ցորչափ ժամանակը տեւէ»։

Զօրապետ Լի որ Հարաւայնոց ամենէն երեւելի զօրապետներէն մին էր քաղաքային պատերազմին ատեն, եւ որուն անպայման անձնատուր ըլլալովն առ Կրանդ զօրապետն գրեթէ վերջացաւ պատերազմը, Հանգօգ զօրապետին հրաւիրանաց թղթոյն պատասխանած է այսպէս. «Կ'ընդունիմ գործը զոր կ'ուզէք տալ ինձ. վասն զի այսպէս ընելով կրնամ յայտնել իմ յարգանքս

զօրականի մը յիշատակին, եւ այսպէս փոխարինել որչափ կրնամ վեհ զգացումներն զոր հանգուցեալը յայտնեց Հարաւի զինուորաց նկատմամբ »։

Յուղարկաւորութեան հանդիսին մասնակցելու կամ հանդէսը տեսնելու համար քանի մ'օր առաջ երկրին ամէն կողմէն հազարաւոր մարդիկ սկսան Նիւ-Եորք գալ, եւ բոլոր պանդոկները լեցուեցան խուռն բազմութեամբ։

Հարիւրաւոր գործաւորք քանի մ'օրէ ի վեր կ'աշխատէին, Ռիվերսայտ Բարք կոչուած հասարակաց պարտէզին մէջ Կրանդ զօրապետին առժամանակեայ դամբարանը պատրաստելու։

Կ'ըսուի թէ այն չէնքն ուր մեռաւ զօրապետը պիտի չգործածուի այլ եւս իբրեւ բնակարան, այլ անոր տէրը պիտի նուիրէ զայն ազգին։ Կրանդի վերաբերեալ չընչին բաներ իսկ իբրեւ մասունք կը պահուին յարգանօք։

ԵԱՆԹԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՂ ՊԼՊՈՒԼԻՆ ԵՒ ՎԱՐԴԻՆ

Ի ԽԱՉԱՏՈՒՐԷ ԱՍԱՏԵԱԼ

Յորժամ եղև գարուն եկ պլպուլն յայգին,
Տեսեալ զթուփ վարդենւոյն այն ի նմին,
Տրամեցաւ դառնագին արտասուէր ուժգին.
Զի ոչ ետես անդէն զիւրն սիրելին։

Ասէ նա ցայգեզործն, եղբայր սիրելի,
Ո՞ւր է վարդս պայծառ զոր աստէն թողի.
Միթէ տեսեա՞լ ես դու, տուր պատասխանի.
Թէ ով տարաւ զնա, արար զիս դերի։

Բամեալ ծաղկունքն ամէն զոր աստէն էին,
Աստ կան ամենեքեան ի իւրեանց տեղին.
Պայծառացեալ ցնծան եւ ուրախ լինին.
Եւ իմ զարդս միայն չէ նոցա միջին։

Միթէ գիտա՞ւկ ես զտեղին որ գնաց.
Կամ չարկամ ոք եկեալ զայն յափշտակեաց.
Եւ կամ առեալ ես դու զնա իւր տեղեաց,
Եւ տարեալ զայն մատուցեալ ես մեծատանց։

Այգեզործն տուեալ նմա պատասխան.
Դու մի տրտմիր այդքան, թռչուն պատուական
Դնացեալ է վարդ քո դառնայ պէկիւման.
Մերձեալ է ժամանակն նորա գալստեան։

Բամեալ ծաղկունքն ամէն ընդ նմա էին,
Նոքա եկեալ առաջ աւետիս բերին.
Եւ մանուշակն եկեալ կարապետ նմին,
Ասաց թէ մուշթուլուս (*) բերաք պլպուլին։

Եւ յորժամ նա լուաւ զայս այգեզործէն,
Ուրախութեամբ ցնծայր եւ ճեմէր անդէն.
Եւ դոհանար զտեսանէ զնորին արարչէն.
Զի փութով կատարէ զոր խնդրէրն իւրմէ։

Օրհնեաց նա զայգեզործն եւ այգի նորին,
Թէ միշտ կանաչ կացցէ բուրաստան քոյին.
Եւ ծաղկունք զարդարեալ անթառամ լիցին.
Եւ միշտ ցաւղ քաղցրագին իջանէ նոցին։

Լուեալ զդալուստ վարդին և ուրախացաւ.
Եւ վերացաւ ի յօդս թռչնոցն հասաւ.
Ասէ, տո՛ւք երանի, սուդ իմ վերացաւ.
Զի վարդս իմ եկ այսաւր խնդումն ինձ հասաւ։

Եկեալ ծաղկունք զարկին վրան մի հաւասար
Զի գայ անդր իջանէ վարդն այն պայծառ.
Եկն վարդն. տարին պուլպուլին խապար.
Ասեն քեզ երանի, ով պլպուլ, պար ա՛ռ։

Եւ յորժամ լուաւ զդալուստ վարդին
Ուրախութեամբ մեծաւ դիմեալ ի յայգին,
Ետես զվարդն բազմեալ ի մէջ վրանին.
Ողջոյն ետ նմա, բերկրեցաւ հոգին։

Նստեալ վեր վարդին եւ գովէր զնա,
Երգս զանազանս յօրինէր նմա,
Գոյն զգոյն ձայնիւ եղանակէր նա,
Գայլին թռչունք ամէն ի յերգս նորա։

Պլպուլն ասաց երգեր իր վարդին սիրով.
Կամիմ զքեզ գովել յերկար և օրով,
Զի չիք քեզ նման հոտով եւ գունով,
Ոչ մուշկ ոչ ամբէր ոչ այլքն համով։

Խօրոտ մորոտ ծաղիկն չէ քեզի նման,
Եւ կամ զնուշնուփար նարկիզն ու շուշան,
Մուրտ եւ մարուփ ծաղկունք եւ ամէր իշխան,
Թէ մանուշակ ծաղիկ որ նշան դարնան։

Գտեալ ծաղկունքն ամէն որ երկիր բուսան,
Աւուր երեքշաբթի որ տեսանէ ստեղծան,
Ծառք եւ դալարք հաւասար ամէն ինչ որ կան.
Դու ես ամենեցուն պարծանք ու սուլթան։

(*) Աւետիս։

Բամեալ ծաղկունքն հաւասար որ կան ի երկրի,
Զի կայ քեզ աւրինակ հանց աղէտ լինի,
Դու դրախտէ եկեալ պարդեւ աշխարհի.
Հրեշտակն իր ետ քեզ Ադամայ նախնի։

Այլ դու ես աննման ի վերայ երկրի,
Ոչ լուսին ե՛արեգակն ի քեզ նմանի.
Ոչ ակն. ոչ մարգարիտ. գոհար ոչ ոսկի,
Ոչ տպազիոն քարն Եգիպտոսի։

Դու ընծայ մ'ես եկեալ ի դրախտէն մեզի
Եւ մեք քեւ ենք ուրախ յայսմ աշխարհի.
Թագաւորաց ես դու աչերս պիտանի,
Եւ իշխանաց մեծաց ես դու ցանկալի։

Որպէս զՄեծ սուլթան ի գահու բազմեալ,
Նման թագուհւոյ առաղաստին լեալ,
Դու ես մի դշխոյ փառօք զարդարեալ,
Եւ հոյլքն ծաղկանց քեզ սպասաւորեալ։

Հիւծեալ ի սէր քոյին կամ քեզ յանդիման,
Եւ բաժանելս ի քէն է ինձ աւր մահուան։
Դու ես միայն աչացս լոյս, հոգւոյս ճան,
Եւ առանց քո տեսոյդ կեանքս է անպիտան։

Թռչունք ամէն ինծի երանի կուտան,
Թէ դու զվարդն ունիս քեզ տասնջական,
Զիկայ քեզ ծերութիւն, ոչ օր կայ մահուան,
Ոչ գոյնդ թափի, ոչ տգեղանան։

Ես եմ ուրախացեալ ի վերայ քոյին,
Զինչ որ զՄեծ Սուլթան ի իւրում թախթին,
Զի դու ես աննման աշխարհիս միջին.
Եւ ես եմ քեզ ի նախ թռչնոցն յետին։

Այս աւր է ինձ ուրախութեան, խինդ առնեմ,
Որ դու ես մօտ ի յիս զքեզ տեսանեմ,
Ապա թէ հեռանաս ասկէց յոյժ վախեմ,
Որ դամ զքեզ որոնեմ ոչ գտանեմ։

Նոր արեգակն այսաւր ծագեալ աշխարհիս
Եւ լուսին բոլորեալ իջեալ ի յայդիս,
Տեսի աչաւք իմաւք զլոյս արեւիս,
Եւ իմ ելած հոգիս դարձեալ եկն առ իս։

Եւ դուք բարի որդեակք իմ սիրելի,
Մի սիրէք դուք զվարդն որ կորուստ ունի.
Այլ ցանկացէք վարդին դուք հոգեւորի.
Արքայութեան միայն եղիք արժանի։

Ի քեզ յուսամ փրկիչ, Աստուած բարերար.
Ինձ տուր համարձակիլ եւ խօսիլ յարմար.
Խաչատուր եղկելիս որ գործոցս եմ չար.
Սատանայի կամացն սպասաւորեալ։

Եթէ կար ի գտնուլ հնար եւ կամ ճար,
Որ սէրն Քրիստոսի լինէր ինձ սաղկար,
Զի այլ ոչ հեռանար յառնէր ինձ յօգտար,
Միշտ ինձ մերձ լինէր, պահէր զհոգիս պայծառ։

Հաւաքեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ

ՔԱՂՈՒԱԾ

ՅԱՌԱՔԱԿԱՆ ԼՐՈՑ

24–30 ՕԳՈՍՏՈՍ

ԱՐՏԱՔԻՆ

—

Պերլինէ Ռիւդերի հեռագիր մը կը ծանուցանէ թէ, Սըր Տրըմընտ Ուոլֆի բանակցութեանց առթիւ, Պերլինի պաշտօնական ակմրոց մէջ լաւ աչքով կը նայուի անգլօ-թուրք համաձայնութեան մը գոյացման։

—Բարիզի նախարարական թերթեր կ'իմանան թէ մայրաքաղաքիս Ֆրանսական դեսպանն զգուշացուցեր է զբ. Դուան Անգլիոյ հետ առանձնակի համաձայնութենէ մը, որով անտես առնուին միւս եւրոպական տէրութեանց իրաւունքներն ու շահերն Եգիպտոսի վարչութեան վրայ։ Նոյն թերթեր այս առթիւ գովեստ կուտան Բ. Դրան մինչեւ հիմա սոյն խնդրոյ մէջ բռնած զգուշաւոր ընթացքին։

—«Փարիզէ տրուած հրամանաց համեմատ», Գահիրէի Պ«ֆոբ Էֆէնտիէն լրագիրն խստաբանութեամբ է։ Այն թերթն էր այս, որ հականդլիական և հակակառավարական հրատարակութիւնք մի քանի ամիսներ յառաջ բաւական մեծ խնդիր յարուցին Խտիվին կառավարութեան, Ֆրանսայի և Անգլիոյ միջեւ։

—Պերլինէն նորէն լուր կը տրուի թէ տարուոյս աշնան մէջ Զարը թագ պիտի դնէ ի Սմըրդանտ իբրև «Կայսր Կեդր. Ասիոյ։» Երկաթուղին այն ատեն երկարածգուած պէտք է լինի մինչեւ Մերվ, ուր Ն. Կ. Վեռափառութիւն այցելութիւն պիտի տայ, և պիտի ընդունուի Մերվի Խանէն։

—Հերադի ափղան կառավարչին յանցանք չունենալը քննութեամբ ապացուցուեր է։ Կը յիշուի թէ անգլ. սպայք կ'ամբաստանէին զնա թէ իրենց նամակները բանալ տալով կը կարդայ, և պարունակութենէն կ'օգտի։

—Ատէնէ կը հեռագրուի սեպտ. 2 թուով թէ անգլ. մարտանաւ մը որ գնացած էր Ամպարօ անգլ. դրօշ պարզելու, տեսեր է որ Ֆրանսացիք իրմէ յառաջ իրենց ազգ. դրօշը պարզեր են հոն։ Անգլ. հիւպատոսը ձեռնունայն վերադարձեր է յՕպոք, բողոք բառնալու Ֆրանսացւոց ընթացքին դէմ։

—Նովոյէ Վրէմիա, Սըր Հ. Ուոլֆի պաշտօնին վրայ խօսելով, կ'ըսէ որ եթէ Ռուսիա մինչեւ ցարդ խղճի մտօք յարգեց Պերլինի դաշնագրին տրամադրութիւններն, այն պատճառաւ չէր որ գոհ էր իրաց հաստատեալ վիճակէն, այլ զի կը փափաքէր արգիլել անգլօ-թուրք դաշնակցութիւն մը, և կը տեսնէր որ Պերլինի դաշնագիրը խափանարար էր մը-տերմական յարաբերութեանց վերահաստատման ի մէջ Թուրքիոյ և Անգլիոյ։ Բայց եթէ ո՛և է նոր կարդադրութեամբ այդ երկուց տէրութեանց միջեւ մտերմական յարաբերութիւնք վերահաստատին, Ռուսիա պիտի պարտաւորի միջոցներ ձեռք առնուլ ինքզինք ազատելու բոլոր այն դաշնագրական կապանքներէ որք ՀՀասարեր են իր շահուց, և օսմ. քաղաքագէտք պիտի հասկընան թէ այն պարագայի մէջ ռուս կառավարութիւնն օգուտ պիտի քաղէ Աւստրիոյ հետ ի Քրիմիէր գոյացուցած համաձայնութենէն։

Ահա՛ մեծ մեծ սպառնալիքներ Ռուսիոյ կողմէ, անգլօ-ռուս սերտ համաձայնութիւն մը արգիլելու համար։ Կը մնայ իմանալ թէ Ռուսիա օ՛րչափ անկեղծ է այս սպառնալիքներ ընել տալով իր կէս-պաշտօնական թերթերուն, և գուցէ մինչեւ իր դեսպանին ի Կ. Պոլիս։

—Պելկրատէ կը հեռագրուի սեպտ. 1 թուով թէ Առնաւուտներու հրոսախմբեր երեք օր յառաջ յարձակեր են Սերպ ոստիկանութեան կայանի մը վրայ ի Մոքրի-Քրէմէն, և սպաններ են երկու ոստիկան։ —Նախարարական կուսակցութեան պատկանող Եաքովիչ Երեսփոխանին սպաննիչը ձերբակալուեր է։ Բանդոմաք անուն մարդ մ'է, որ իր համախոհից անունները տուեր է։ Այս իմանալով, Կիուրիչ անուն արմատական Երեսփոխանը փորձ փորձեր է ինքնասպանութեան, բանտին պատուհանէն վար նետելով ինքզինք. բայց իր այս խորհրդոյ գործադրման առաջքն առնուեր է։

—Սպանիական կառավարութիւնը, պատասխանելով Գերմանիոյ ծանուցագրոյն ի մասին խռովութեանց որք անցեալ շաբաթ օր տեղի ունեցան գերմանական դեսպանատան առջեւ, իր ցաւն ու զայրոյթն յայտնեց խռնեալ ամբոխին կողմէ գերմանական դրօշին եղած անարգանքին համար. ծանուցագիրը կ'աւարտի յայտարարելով թէ բռնաւորներն, որք ձերբակալուած են, պիտի պատժուին։

—Նոր Տայէ Ալիէմայնէ Զայտոնկ իր զարմացումը կը յայտնէ այն թեթեւամտութեան համար որով Սպանիական մամուլն յայտնեց իր կարծիքներն Գերմանաց Եաբկղին ելնելուն առթիւ, և կը հաստատէ թէ հաղորդակցութեանց պակասութեան պատճառաւ անհնար էր Գերմանիոյ ետ առնուլ ցամաք ելնելու հրամանը։ Նոյն լրագիրը կը յաւելու նաև թէ Գերմանիա երբէք չէ կարծած որ Կարոլեան կղզեաց վրայ իր դրօշը պարզելու դործողութիւնն որքան յուզում յառաջ պիտի բերէ Սպանիոյ մէջ։

—Սեպտ. 1ին Վիլհէլմ Կայսրն ընդունեց զՄոհսին Խան, և նմա ընկերակցող մէկ հայազգի և երեք պարսիկ դիւանագէտներն, որք կը կազմեն պարսկական նոր դեսպանութիւնն ի Պերլին։ Նոքա ապա ներկայացուցեցան Աւկուսդա Կայսրուհւոյն։

—Սեպտեմբեր 2ին, Սըտանի եւ Նաբոլէոն Գ. ի անձնատուութեան 15րդ տարեդարձն իբրեւ ազգային տօն ընդհանուր ուրախութեան օր մ'ելաւ Գերմանիոյ ամեն կողմը։ Մերունի Կայսրը, բժշկաց խորհրդոյն չ'անսալով, կառքի մը մէջ գնաց հանդիսատես լինել իր քաջավարժ և կորովի զօրաց մեծ մարզահանդիսին։ Նայիմնալ Զայդոնկ այս առթիւ կը գրէր. «Եւրոպիոյ մէջ ո՛չ ոք պիտի համարձակի պատերազմասէր հպարտութիւն վերագրել մեզ, երբ այս օրը (Սըտանի տարեդարձը) կը տօնենք իբրեւ օր յիշատակութեան անոնց որք անկան 1870-71 պատերազմին մէջ. օր ուրախութեան այն մեծ արդեանց համար զոր ձեռք

բերինք, և օր նորոգման այն ուխտի զոր ըրած ենք՝ զօրաւոր ձեռքով մը կանգուն պահելու ինչ որ անհուն զոհողութեամբք ստացանք և հաստատեցինք իբրեւ արդիւնք այն մեծ յաղթութեան։»

— Անգլիոյ պահպանողականք չնորոգեցին Իռլանտայի եղեռնային բացառիկ օրէնքը, բայց կ'երեւի թէ նորոգել ուզողներն առաւել իրաւունք ունէին, որովհետեւ յիշեալ օրէնքին դադարումէն ի վեր «կալուածական ոճիրք» վերսկսած են Իռլանտայի զանազան կողմերը։ Նաև, վարձք չվճարող վարձակալ մշակներն իրենց արտերէն և տուներէն հանելու համար ոստիկանութեան ըրած օրինական փորձերուն մշակներն յաջողապէս դիմադրած են։ Պ. Բառնէլ «Իռլանտա իբրեւ ինքնօրէն Ազգ» ըսելով առաջարկուած ազգասիրական բաժակի մը պատասխանելով, յայտարարեց Դիբենկի մը մէջ, որ եթէ Անգլիացիք ինքնօրէն Խորհրդարան մը չտան Իռլանտայի, Իռլանտական Խորհրդարանական կուսակցութիւնն իւր բոլոր ոյժ ի գործ պիտի դնէ ուրիշ ամենաեսակ օրէնսդրութիւն անհնարին գործելու անգլիական Խորհրդարանին մէջ։ Ծաղրեց այն գաղափար թէ Ազատականք և Պահպանողականք իրենց կարծեաց տարբերութիւնները մի կողմ կրնան դնել Իռլանտական կուսակցութեան դէմ միանալու համար։ Այս կուսակցութիւն առաջիկայ ընտրութիւններէն նոր ոյժ մը ստանալով, նոր ջանքեր պիտի ընէ իրագործելու ազգային բաղձանքն, որ է՝ Իռլանտայի վարչային և քաղաքական ինքնօրինութիւնը։ — Լորտ Հարդինկը ի դիմաց Չափաւոր Ազատականաց կը մերժէ Պ. Բառնէլի այս գաղափար։ Բայց Պ. Չէմպըրլէն, ի դիմաց արմատական Ազատականաց, կուսակից է բաւական ընդարձակ վարչային ինքնօրինութիւն տալու Իռլանտայի։

— Նոյեմբերի մէջ կը կարդանք թէ օգոստ. 2ին Նուխիի շրջակայ վանքի մը մէջ Հայք ծեծ կերան Կիշի գիւղի թաթարներէն։ Այն դէպքի մանրամասնութիւնը հետեւեալն է։ Այդ օրը վանքի մէջ կային 15 այր եւ 5 կին։ սոցա ականջին աղեկոսուր ճիչ մը կը հասնի յանկարծ։ Վանքէն ելնելով կը տեսնեն որ երեք թաթարներ անօգնական ծերուկի մը վրայ յարձակեր են։ Հայք օգնութեան կը հասնին իսկոյն։ սակայն այս վարմունք աւելի եւս կռուի առիթ կուտայ։ Շուտով մը 30ի չափ թաթարներ կը ժողվուին, կռիւը կը սաստկանայ եւ Հայերն որ սակաւաթիւ էին չարաչար ծեծ կուտեն։ Հայուհիները կը փախչին կ'երթան վանքի սենեակներու մէջ պատսպարուիլ, վայրենի թաթարներն ալ դռներն ու պատուհանները կոտրտելով ներս կը մտնեն անոնց ետեւէն։ բարեբաղդաբար նոցա ընկերներէն մոլլա մը կը համոզէ ետ դառնալ, որով կը յաջողի բաղմաթիւ չարեաց առաջքն առնուլ, եւ հայ աղջիկներն ու կիները բռնաբարումէ ազատ պահել։ Շուտով վրայ հասաւ ոստիկանութիւնն, որոյ աչքի առջեւ թաթարաց ամբոխն առանց երկիւղի սկսաւ աղաղակել։ Թող Կեավուրները կորնչին աշխարհէ», եւ ապա ցրուեցան։

ՆԵՐՔԻՆ

—o—

Իզմիրի նախորդ կուսակալ Հաճի Նաշիտ փաշա՝ որ անուանած է կուսակալ Սուրիոյ, եւ Յերանիկի նախորդ կուսակալ Հագդը փաշա՝ որ անուանած է կուսակալ Իզմիրի, մայրաքաղաքս եկած են եւ կայսպալատն հիւրընկալուած, ուր քանի մ'օր մընալէ յետոյ, իրենց նոր պաշտօնատեղիները պիտի ուղեւորին։

— Արեւելեան Ռումէլիի կուսակալ Կավրիէլ փաշա շաբթուս մէջ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու եւ համակիր ընդունելութիւն գտաւ։

Ն. Վեհափառութիւն Շէֆգաթի պատուանշանն ընծայեց Տիկին Կավրիէլ փաշայի։

Կուսակալն ու տիկինը Փիլիպէ կը վերադառնան այսօր յատուկ կառամբով։

— Անգլ. արտասովոր պատուիրակ Սըր Տ. Ուոլֆի եւ Էֆգաֆի ու Արաբին դորձոց նախարարներէ կազմեալ Յանձնաժողովն իւր նեստերը կը շարունակէ ի Բ. Դուռն, խորհրդակցելով Եգիպտական խնդրոյն վրայ։

Հարկ կը համարինք կենսագրական քանի մը համառօտ տեղեկութիւններ հրատարակել Սըր Հենրի Տրըմընտ Ուոլֆի վրայ, որոյ արտասովոր պատուիրակութեան պաշտօնը Վեհ. Սուլթանի մտ, համայն Եւրոպիոյ ուշադրութիւնը գրաւած է այս պահուս։

Սըր Ուոլֆի հայրն էր վերապատուելի Տոքթ. Ուոլֆ՝ երէց Պրէսբիտերաց կղզւոյն (ի Սոմէրսէթշայր), որ հրէութենէ դարձած էր ի բողոքականութիւն, եւ ամուսնացած էր Անգլիոյ ազնուապետական դասէն վիպական աղջկան մը հետ։

Սըր Տ. Ուոլֆ ծնած է 1830ին ի Մալթա։ Տասն եւ եօթ տարեկան հասակին Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնատան ծառայութեան մտաւ եւ հինգ տարի յետոյ Ֆլորանսի դեսպանատան կցորդ եղաւ։ Քսան երկու տարեկան էր, երբ Լորտ Մալմսբիզպուրի՝ արտաքին գործոց նախարար ընտրուելով՝ Լոնտրա կոչեց զայն եւ իրեն մասնաւոր քարտուղար անուանեց։ Այդ պաշտօնէն անցաւ Գաղթական Նախարարութեան պաշտօնատունն, Սըր Էտուարտ Պիզվէր Լայթընի նախարարութեան օրով եւ 1860ին, Իոնեան կղզիները ղրկուեցաւ պատուիրակի պաշտօնով։

Երբ 1864ին Անգլիոյ թեւարկութիւնը վերցաւ այդ կղզեաց վրայէն, Սըր Ուոլֆ պաշտօնէ քաշուեցաւ։ Տաս տարի յետոյ, վերստին հանրային կեանց մէջ մտաւ իբր Խորհրդարանի անդամ Քրիսթկըրչի գաւառին կողմէ եւ 1878ին Արեւելեան Ռումելի ղրկուեցաւ բրիտանական պատուիրակի պաշտօնով։ Անդ ամիս մը ունեցաւ բարեկամական լաւ յարաբերութիւններ հաստատել օսմանեան պաշտօնատարաց հետ։ Անգլիական մամուլը կ'ըսէ թէ Սըր Ուոլֆ նշանաւոր ծառայութիւններ մատոյց յայնժամ Թուրքիոյ. հաւանական է սակայն որ ամենէ առաջ խորհեցաւ այդ ծառայութիւնները մատուցանել Անգլիոյ՝ որ վերադարձին վարձատրեց զինքը Բաղանեաց կարգի պատուանշանով։

1880էն ի վեր, Սըր Ուոլֆ Անգլիոյ Խորհրդարանին մէջ կը բազմի Բօրթըսմութի քաղաքին կողմէ։ Պահպանողական երեսփոխան մ'է։ Գործի ատենաբան մ'է և կարուկ կը խօսի ու հաճութեամբ կը լսուի, վասն զի խօսք կ'առնու այն մանաւոր խնդրոց վրայ միայն զորս խորապէս ուսումնասիրած է։

Իբր դիւանագէտ՝ վարժեցուցած է անգլիական կառավարութիւնն իւր խորհրդոց հետեւիլ յամախ, եւ հաւանական է որ իւր ներկայ պատուիրակութեան ելից համաձայն գծուի Անգլիոյ այժմեան նախարարութեան ծրագիրն Եգիպտական խնդրոյն մէջ։

Սըր Ուոլֆ գրագէտ մ'է միանգամայն իւր մեծանուն նախահօր Հորաս Ուոլբոլի նման։ Պ. Լէսբէսի մէկ գործը թարգմանած է Սիւէզի ջրանցին վրայ եւ գրած է նաեւ պատմութիւն մը «Նաբոլէոն յէլպա Կղզի» անուն։ Այս երկու գործոց մէջ ալ յոյժ հետաքրքրաշարժ եւ նորանոր տեղեկութիւնք կը գտնուին։

—Փիլիպէի համանուն լրագիրն Արեւելեան Ռումելիի միայն մէկ գաւառակին մէջ քանի մ'օրուան մէջոցին Պուլղարաց կողմէն Իսլամաց վրայ ի գործ դրուած հարստահարութեանց եւ բռնութեանց տաս դէպքեր կը թուէ, որք իրարմէ աւելի կամ նուազ սրտաճմլիկ են։

Ցիշեալ լրագիրը կը յարէ թէ իսլամները գանակոծող ոստիկաններն ոչ միայն չեն պատժուիր, այլ եւ քանի մը բուպլի նուէր ալ կ'ստանան ի վարձատրութիւն։

—Հեռադրական և թղթատարական պիտոյից գործարանի տնօրէն Էմիլ Լագուան էֆէնտի եւ իւր օգնական Բաիֆ էֆէնտի ժամանակէ մ'ի վեր կաշխատէին հեռադրական ամեն տեսակ պիտոյքներ ու գործիները մայրաքաղաքիս մէջ պատրաստել այնպէս որ հարկ չմնար եւրոպական գործարանաց դիմելու։ Ցիշեալ պաշտօնատարք իրենց անձանձիր աշխատութեամբ յաջողած էին ամեն ինչ պատրաստել բաց ի հեռադրական բարդերէ (Քէլ), որոց համար պէտք եղած գործիները կը պակսէին։ Այս անգամ յիշեալ գործարանն յաջողեր է այդ գործիներն եւս հայթայթել որով այժմ ամենաընտիր բարդեր կը շինուին մայրաքաղաքիս մէջ։ Կ'ըսուի թէ այդ գործիները ձեռք բերելու համար 70,000 ֆրանք ծախսուած է, գումար մը զոր կայս. կառավարութիւնն ամեն տարի կը վճարէր այդ բարդերէն գնելու համար։

—Մանրակրկիտ լուրեր կը հասնին Պուլղարօ-Ռումանական սահմանագլխէն։ Ռումանիացիք բռնութեամբ տիրեր են Արապ-Թաղիա ամրոցին որ պուլղարաց ձեռքը կը գտնուէր 1879 էն ի վեր։ Այս առթիւ բաւական շփոթութիւն եւ արիւնահեղ կռիւներ տեղի ունեցեր են երկուստեք։

—Կարնոյ անգլիական հիւպատոս գընդապետ Եվրէթ մայրաքաղաքս եկաւ։

—Գահիրէէն առնուած լուրեր կը ծանուցանեն թէ նախարարապետ Նուպար փաշայի առողջութիւնն յոյժ խանգարեալ լինելով վերջերս, բժիշկք պատուիրեր են Ն. Բարձրութեան որ ժամանակ մը կատարեալ հանգիստ վայելէ։

—Բարձրագոյն հրամանաւ, Թաֆիկ Վաֆայէ վերստին հրատարակուիլ պիտի սկսի։

Սոյն պաշտօնական թերթի տնօրէնութիւնը կայս. հրամանաւ յանձնուած է Տըպագրական Դիւանի տնօրէն Վսեմ. Մէհմէտ էֆէնտիի։

—Մէնէնէօ կ'իմանայ թէ Միտիլլի կառավարիչ Ակեահ էֆէնտի մայրաքաղաքս հրաւիրուած էր ուր կարեւոր պաշտօնի մը պիտի կոչուի։

—Կայսերական հրամանագրի մը համաձայն, Վսեմ. Մավրոյէնի փաշա անուանեցաւ ընդհանուր քննիչ Ա.ժշկական արքունի վարժարանին եւ մայրաքաղաքիս բոլոր քաղաքային եւ զինուորական հիւանդանոցաց, պահելով հանդերձ կայսերական պալատան բժշկապետի եւ Վեհ. Սուլթանին անձնական բժշկի պաշտօններն։

Այդ միեւնոյն հրամանագրով, Ն. Վսեմութեան ամսականին վրայ 8000 ղրուշի յաւելում մ'եղած է։

—Վանայ ռուսական նախորդ հիւպատոս Վսեմ. Կամսարական ալէյ՝ մայրաքաղաքս եկաւ։

ԱԶԳԱՑԻՆ

—o—

Այս երեքշաբթի առաւօտ պաշտօնական հեռագիր մը հասաւ Էջմիածնայ Ս. Սինոդի կողմէ՝ Գեր. Բարամեանց Մկրտիչ Արքեպիսկոպոսի ստորագրութեամբ՝ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն։ Հեռագիրը Ֆրանսերէն խմբագրեալ է եւ կ'ըսէ թէ «Կայսերական Կառավարութիւնը պաշտօնական գրով մը կ'իմացնէ թէ Վեհ. Կայսրը բարեհաճած է երկու Բանֆիֆոներէն Պեսարապիոյ Առաջնորդ Մակար Ս. Արքեպիսկոպոսն հաստատել ծայրագոյն Պատրիարք Էջմիածնի։ Զայս ծանուցանելով Ձերդ Ամենապատուութեան և Ձեր միջոցաւ համօրէն մերազնէից ի Թուրքիա, կը յարենք թէ Ս. Սինոդին այս նկատմամբ պաշտօնական գրութիւնն ի մօտոյ պիտի ղրկուի Ձեզ»։

Այս հեռագրոյն վրայ, Ս. Պատրիարք Հայրն յարտասուվոր նիստ հրաւիրեց Խառն ժողովն որ չորեքշաբթի առաւօտ գումարուելով, նկատողութեան առաւ հեռագիրն, եւ կարծեաց փոխանակութենէ յետոյ, Կրօնական եւ Քաղաքական ժողովներն ուրոյն ուրոյն նիստ ըրին եւ իրենց կարծիքն ամփոփող բանաձեւներ խմբագրեցին։ Կրօնական ժողովն ինչ ինչ նկատողութիւններ մէջ բերելով կ'եզրակացնէր վերապահմամբ ընդունել Մակար Արքեպիսկոպոսի Կաթողիկոսութիւնն։ Իսկ Քաղաքական ժողովն կեզրակացնէր յարգանօք ընտրել Մակար Արքեպիսկոպոսի Կաթողիկոսութիւնը, պընդելով մանաւանդ Ն. Սրբազնութեան անձնական եւ եկեղեցական արժանեաց եւ բազմամեայ հաւատարիմ ծառայութեանց վրայ, որոց գովեստ կուտայ, եւ կը յայտարարէ թէ զայս ընդունելութիւն օգտակար կը համարի Ազգին եւ Եկեղեցւոյն կենսական շահուց, քանի որ ադով առաջին քայլ մը կ'առնուի յարաբերութեանց հաստատման նոր Կաթողիկոսին հետ, որուն առաջին գործը պէտք է լինի Թուրքիոյ Հայոց հետ համախոհութեամբ ընտրական ընդունելի եղանակ մը գտնել եւ վաւերացընել տալ Կառավարութեան։

Երկու ժողովները նորէն միանալով, բանաձեւները կարդացուեցան եւ բաղդատուեցան։ Կրօն. ժողովոյ անդամք մեծամասնութեամբ նախամեծար համարեցին ստորագրել Քաղ. ժողովոյ պատրաստած բանաձեւն, որ ընդունուեցաւ, Ազգային ժողովոյ ներկայացուելու համար։ Բանաձեւը չեն ստորագրած միայն Գեր. Իզմիրլեան Արքեպիսկոպոս, Ց. Աշոտ վարդապետ եւ Տ. Կարապետ քահանայ Սեթեան։

—Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ կայս. պալատան մառանապետ Օսման էֆէնտիին պարգեւել Օրթագիւղի տունը, զոր երբեմն պարգեւած էր հոդելոյս Պատրիարքին, եւ որ մահլէ մնացած էր Ն. Սրբազնութեան մահուամբ։

Հետեւապէս, յիշեալ տունն ի վաճառ չպիտի հանուի Վաֆքֆի տէրերուն կողմէ։

Ն. Կ. Վեհափառութիւն բարեհաճեցաւ

նաեւ հրաման ընել որ 1,700 ոսկի վճարուի Վ.ՊԷՖի տեարց, գումար մը որ տան արժէքը կը ներկայացնէ։ Ն. Կ. Վ.ՀԱՓառութիւն դրեթէ նոյնչափ գումար մը վճարել տուած էր նոյն տունը դնելու հոգելոյս Պատրիարքին պարգեւելու համար։

Այս 1,700 ոսկւոյ կէսէն քիչ մը պակաս կը ստանայ Տիվրիկի ազգային Վ.ՊԷՖը. նոյն գումարին իբր մէկ երրորդը կը ստանայ Ս. Փրկչեան Հիւանդանոցն, եւ իբր մէկ չորրորդը պարտ էր ստանալ Երուսաղեմատունը։ Բայց որովհետեւ, ինչպէս արդէն ծանուցինք, Երուսաղեմատան Վ.ՊԷՖի իրաւունքը խնդրոյ տակ է, Երուսաղեմատունը դատ պիտի վարէ իւր իրաւունքն հաստատելու եւ իրեն պատկանեալ բաժինն ստանալու համար։

—Իզմիրի Գաւառ. ժողովոյն հռչակաւոր բողոքին դէմ Իզմիրի ազգայնոց ոմանց կողմէ ի Պատրիարքարան ուղղեալ բողոքը կ'ըսէ թէ յիշեալ ժողովոյն բողոքն անընդունելի է, որովհետեւ նոյն իսկ ժողովոյն այժմեան կազմութիւնն ապօրէն վիճակի մէջ է։

—Խօսք կայ թէ Գարակէօղեան եղբարք կը յօժարին 1,000 ոսկի վճարել ծանուցեալ կտակի խնդրոյն միանգամ ընդ միշտ կարգադրման համար, եւ թէ Բաղ. ժողովն այս խնդրոյ ելք մը տալու համար պէտք եղած խորհրդակցութեամբք զբաղեալ է։

—Կը լսենք թէ Թուրք մը որ Բուսմէլիի երկաթուղեաց վիճակահանութեան մեծագոյն թիւը շահած էր մօտերս, 12,000 ոսկի առաջարկեր է դնելու համար Պոլսոյ Թիճարէթ Խանը, զոր Սովելոյ Պատ. Յանձնաժողովն ստացած է Սովելոյ հանդանակութեան մնացեալ գումարէն 6-7 հազար ոսկի վճարելով։ Բայց այս առաջարկութիւն չէ ընդունուած Յանձնաժողովոյն կողմէ։

—Երէկ Բ. Դռնէն Պատրիարքարան հասաւ և գոհութեամբ կարդացուեցաւ կառավարական հրամանագիրն, որ կ'արտօնէ Մշոյ Առաջնորդ Դեր. Աղեքսանդրեան Գրիգորիս եպիսկոպոսն իւր պաշտօնատեղին վերադառնալ։

ՀԱՆԳԻՍՏ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ
Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑ

Հինգշաբթի երեկոյ թէ՝ յԱզգ. Պատրիարքարան եւ թէ Խմբագրութեանս ուղեալ հեռագիրք՝ Երուսաղեմի Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարքի մահը գուժեցին։

Ազգային ժողովն որ ի նիստ հրաւիրեալ էր յաջորդ օրը, ցաւօք տեղեկանալով Եսայի Պատրիարքի մահուան, իւր նիստը դադրեցուց ի նշան սգոյ։

Երեսփոխանական ժողովոյ փակմանէն անմիջապէս յետոյ, Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ հեռագիրն ուղղեց ի Ս. Երուսաղէմ, Ազգ. ժողովոյ և Կեդր. Վարչութեան ցաւակցութիւնն արտայայտելու համար։

Պատրիարքական Փոխանորդ
ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Երուսաղէմ

Ազգ. ժողովը, ի նիստ գումարեալ այսօր, ցաւօք սրտի իմանալով Ամեն. Տէր Եսայի Սրբազանի հանգիստը, փակեց իւր նիստն ի նշան սգոյ և կը փութայ իւր խորին վշտակցութիւնը յայտնել Միաբանութեանդ։ Ազգ. Վարչութեան Խառն ժողովն ալ կը մասնակցի այս սգոյն։

Պատրիարք Կ. Պոլսոյ
Վ.ԵՂԱՊԵՏԵԱՆ

Ս. Պատրիարք Հօր հրամանաւ, Կ. Պոլսոյ եկեղեցեաց մէջ վաղուընէ սկսեալ «Հանգուցեալ» մակդիրով կը յիշատակուի Երուսաղեմի Պատրիարքին անունը։

ՏՈՔ. ՍԻՄՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

Ղալաթիա, Գամոնտօ փողոց, Թիւ 7

հիւանդ կընդունի ամեն օր կէս օրէն վերջը, մասնաւորապէս միզային դորձարանաց և վիրաբուժական ախտերու համար։ 4—12

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company
ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐԲԸՆԹԱՑԻ

Լոնդրայի և Էդինբուրգի ապահովոութեան ընկերութեան

Անդը Լէր.

Արտօնեալ դրամագլուխ		3,000,000
Բաժանորդագրեալ դրամագլուխ		2,500,000
Վճարեալ »	625,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	1,592,235	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	3,841,194	
		6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	1,186,865	
Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	551,307	
		1,738,172

NORTHERN
Assurance company
ՆՕՐԹՀԸՐՆ

Լոնդրայի և Էդինբինի ապահովութեան ընկերութեան

Անդը Լէր.

Բաժանորդագրեալ դրամագլուխ		3,000,000
Վճարեալ »	300,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	811,871	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	1,778,300	
		2,890,171
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	520,206	
Կեանքի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	251,572	
		771,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Գալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և դաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութեան ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անդը լիրա

Արտօնագրեալը, շոգենաւներու և առագաստանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Կալաթա, Քօմիսիոն խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն, առ.

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ

ԳՈՒԻՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԴԵՀԻ ԴԷՄ
ՌԸԼԻԷՆՍ

Ծովային ապահովագրութիւն։ –Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիթալ, Եօրկիատիս խան Պահչէ – գաբու, Պոլիս։ կամ Գալաթիա, Ալէքսիատի խան թիւ 15։

ԼՈՖԹԸՆ ԵՒ ՉԻՄՆԷԼ
ՄԹԵՐԱՆՈՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԵԱՑ

ՔԻՒՐՔՃԻ ԳԱԲՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը կրէ 300 օխա։

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է։ Գնողը երբ գոհ չիլնի, կրնայ ետ առնուլ իւր ստակն։

502

ԺԱՄԱԳՈՐԾ
Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

244 — ԽՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ ԳԼՈՒԽ — 244

30Է ՓՐՆԲ

142 ՂՐՇ

Ցանուցեալ ամէնէ համբաւաւոր գործարաններէ միոյն մէջ խիստ խնամքով պատրաստել տուած է նշանակեալ գնով նմանը ցարդ չտեսնուած 15 սանդիմէգը երկայնութեամբ խիստ ձեւաւոր, զարնող, շաբաթը մի անգամ լարուող, պատի ժամացոյցներ։ որք ընդունելութեան սրահներու, սենեկաց, վարժարանաց եւ դրասենեկաց վայելուչ եւ յարմարագոյն են, և որոց երկար տարիներ ամենայն կանոնաւորութեամբ բանիլն կ'երաշխաւորէ։

Ցիշեալ վաճառատան մէջ կը գտնուին նաեւ խիստ ժամանակներով լաւ բանող ընտիր ժամացոյցներ։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով եւ ճշդութեամբ կը կատարուին։

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

Ուղեւորութիւն է Հայաբնակ Գաւառս Արեւելեան Տաճկաստանի

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Սարէն և Զորէն, Հնէն և Նորէն

ՊԻՏԱՆԻ ԴԻՏՆՈՑ

ՄԱՍՆ Գ. ԵՒ ՎԵՐՋԻՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Զօն առ Խրիմեան Հայրիկ. Կանխաբան. Հրահանգ. Տեսութիւն մը. Լեզուաբանական դիտողութիւն մը. Նամակներ. Առբերանի գաւառն և իւր գիւղօրայքն. Քաջբերունեաց գաւառն և իւր գիւղօրայքն. Հարք գաւառն և Մանազկերտ՝ հին բերդաքաղաքն իւր գիւղերով. Կարմիր վանքն և հրապարակական քարը. Ասպահունեաց կամ Հացեաց գաւառն (Վերին և Ներքին Պուլանըխներ) իւրեանց գիւղերովն. Մէճիտլուի գեղջկուհին. Հասան-Կորան և իւր բընակիչքն. Հետաքրքիր յայտնութիւն և հին խաչքար մը. Խնուս գաւառն և իւր գիւղօրայքն. Ս. Կարապետի ամայացեալ վանքն. Կարնոյ գաւառն, քաղաքն, գիւղօրայքն և վանօրայքն. Հայ գիւղացւոց տարեկան կենաց չորս եղանակի համառօտ նկարագիրն իւրեանց բոլոր երեւոյթներով. Քրդաց վերայ համառօտակի. Գաւառական կրճատեա անուանք։

Ա. բասնատէր Կ. Ս. ԻԹԻՐՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ